

ՄԱՐԶԻԳ

ՀԱՇՎ

Մարզիկ

ՄճլԵ ՐԵԱՅԻԵ ՏԻԻՐԵ
ՏՎԵՐԻԱ ՅՄԵԻԵ ԱԻՄՆԵՄ ՅԻՐՈՒ

marzig

SPORTS MAGAZINE

ՅԻՐԴ ՏԱՐԻ, 2012, ԹԻԻ 2 (356) - VOL. XXXI N° 2 - ԱՏՆԵ ԱԻԻԵ ԱԻԻԻՄ - ԱԵԵԵ ԱԻԻԻ



Հ.Մ.Ը.Մ. ԱԻՍՏՐԱԼԻԱ

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. «ԵՐԵՒԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԼԱՒԱԳՈՅՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ»



Թղթակից
ԵՐԵՒԱՆ

2012 թ. Փետրուարի 29-ին Հայաստանի երիտասարդական հիմնադրամում տեղի ունեցավ Հայկեան մրցանակաբաշխութիւնը:

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից սահմանուած Հայկեան մրցանակներ ըստացան 2011 թ. երիտասարդական տարբեր

ոլորտներում իրենց լաւագոյնս դրսեւորած երիտասարդական եւ ուսանողական կառոյցները:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը եւս ներկայացուած էր մրցանակաբաշխութեանը:

Միջոցառմանը ներկայ էին նաեւ պաշտօնական հիւրեր՝ Հ.Հ. վարչապետ Տիգրան Սարգսեանը, կրթութեան եւ գիտութեան նախարար Արմէն Աշոտեանը, հասարակական կառոյցների ներկայացուցիչներ, ԲՈՒՀ-երի ուսխորհուրդների նախագահներ, ուսանողներ:

Մեծ էր ուրախութիւնը, երբ «Երեւանում գործող լաւագոյն երիտասարդական հասարակական կազմակերպութիւն» անուանակարգը յայտարարելիս, էկրանին յայտնուեց Բիւրականեան սկաուտական բանակավայրի կայմը՝ հայկական եռագոյնով:

Խորհրդանշական արձանիկն ու հաւաստագիրը ստացող Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ Էդր. Հրաչ Շմաւոնեանը՝ իր ողջոյնի եւ շնորհակալական խօսքից յետոյ, ներկաներին տեղեկացրեց, որ այս տարի մեծ մաշտաբով նշուեմ է հայ սկաուտութեան 100-ամեակը եւ բոլորին սիրով հրաւիրեց մասնակիցն ու հաղորդակիցը լինել յիշարժան այս տօնին նուիրուած միջոցառումներին:

Նշենք, որ Հայկեան մրցանակաբաշխութեան շրջանակներում սա կազմակերպութեան արդէն երրորդ մրցանակն է:

Մրցանակաբաշխութեան հիւրասիրութեան ընթացքում Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը ներկայացնող սկաուտաստիճանաւորներ Այտա Թորոսեանն ու Անի Սարգսեանը շփուել եւ գրուցել են Հ.Հ. վարչապետ Տ. Սարգսեանի եւ այլ Հ.Կ.ների ներկայացուցիչների հետ: Նրանք պատմել են սկաուտական շարժման եւ կազմակերպութեան ծաւալած գործունէութեան մասին: Իսկ վարչապետի այն հարցին. «Արարատ բարձրացել էք այս տարի, չէ՞», պատասխանել են. «Դեռ ոչ, բայց պատրաստուեմ ենք»:

Նշենք նաեւ, որ այս մրցանակաբաշխութեան յաղթողներին արժէքաւոր նուէրներ էր պատրաստել միջոցառման գլխաւոր հովանաւոր Samsung ընկերութիւնը: Մասնաւորապէս Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին յանձնուեց «Samsung Galaxy Tab 8.9», որը կը ծառայի տեղական եւ միջազգային ծրագրերին մասնակցող կազմակերպութեան պատուիրակներին:

Հայկեան մրցանակաբաշխութեան նպատակն է խթանել ուսանողական ինքնակառավարման մարմինների ակտիւութիւնը, ուսանողական ինքնատիպ նախաձեռնութիւնները, գիտութեան ոլորտում երիտասարդների ներգրաւուածութիւնը, միջազգային համագործակցութիւնը եւ պետական երիտասարդական քաղաքականութեան իրականացման այլ ոլորտներում կատարուած աշխատանքները:

Հայկեան մրցանակաբաշխութիւնն անցկացուեմ է Հ.Հ. վարչապետ Տիգրան Սարգսեանի բարձր հովանու ներքոյ:

ՔՈՅՐ ՌԻՄԱ ԱՔԵԴԻ-ՍԱՂԲԵԱՆԻ ԿՈՐՈՒՍՏԸ

Հ.Մ.Ը.Մ.-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը սրտի դառն կակիծով կը գուժէ իր կազմի անդամուհիներէն քոյր Ռիմա Աբեղի-Սաղրեանի մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 14 Մարտ 2012-ի ուշ գիշերին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Քոյր Ռիմա Աբեղի-Սաղրեանի անժամանակ կորուստը խոր վիշտ պատճառեց Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ

ընտանիքին ու հարազատներուն:

Ափսո՛ս, զօրաւոր անհատականութեամբ այս հայուհին չկարողացաւ յաղթահարել շուրջ վեց տարիներէ զինք գերող անողոք հիւանդութիւնը:


Քրոջ վաղաժամ մահով, ո՛չ միայն Աբեղի եւ Սաղրեան գերդաստանները կորսնցուցին հարա-





ԹԻՒՆԻՆ ՆԻՒՆԵՐԸ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجله ریاضیه شهریه تصدیرها جمعیه الهومتین الریاضی



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Ս.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԱՆ

3107 ՏԱՐԻ, 2012, ԹԻՒ 2 (356)



Հ.Ս.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Ակնարկ 3
- Դեմքեր 5
- Պատմություն 7
- Մեր Տեսակցությունները 12
- Մասնաճիղի Մասնաճիղ 16
- Մեր Կորուստները 37



ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 14
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40




ԽՄԲԱԳԻՐ
 Կիզեն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ ԱՆԴԱՄ
 Սեդա Պէշեան (Լիբանան),
 Սեւան Նազարեան (Ֆրանսա),
 Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.
 Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան
 (Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան
 Շահինեան (Գանատա), Ռազմիկ
 Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ
 Պատրիկ Կիւլպենկեան, Գրիգորիս
 Պողարեան, Արօ Մոսիկեան
 (Լիբանան), Յարութ Սատենլեան
 (Արեւմտեան Մ. Նահանգներ),
 Զարեհ Տերվիշեան (Գանատա)

Էջադրում - Արշո Պալեան
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրճ Համուտ, Եհնիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՑՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 4000 Լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ծշդուած է 48000 Լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Ս.Ը.Մ.ի Սեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$70,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



Հ Ա Մ Բ Ա Գ Ր Ն Կ Ն Ա Ն Ն

ՔԱՆԱԿԸ ԿԱՐԵՒՐ

Քանակի եւ որակի խնդիրը նոր չէ: Յաւիտենական պայքարի մէջ են երկուքը: Քանակն է, որ որակ կը ծնի, թէ որակն է, որ իր շուրջ քանակ կը համախմբէ:

Երկու պարագային ալ քանակը կարելոր է, իբրեւ թիւ ու կշիռ: Ի զուր չէ, որ Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագիրը ամբողջ գլուխ մը կը յատկացնէ այս մտահոգութեան՝ «Անդամակցութեան թիւի աճ եւ անդամներու պահպանման բարելաւում» վերնագրով:

Քանակի մտահոգութիւնը համահայկական է եւ ունի կենսական նշանակութիւն, որովհետեւ Սփիւռքի հայ պատանիներու եւ երիտասարդներու 96 առ հարիւրը՝ աւելի քան 600 հազար հայորդիներ, այսօր կը յաճախեն ոչ-հայկական վարժարաններ եւ, հետեւաբար, անհասանելի են Հ.Մ.Ը.Մ.ին եւ ընդհանրապէս հայկական միութիւններուն:

Ի՞նչ ընել եւ ի՞նչպէս ընել, որպէսզի հայերէնին եւ հայոց պատմութեան անժանօթ այս տղաքը քաջալերուին Հ.Մ.Ը.Մ.ին միանալու: Ահա՛ առաջնահերթ խնդիրը, որուն լուծում մը պէտք է գտնել շատ արագ՝ համապատասխան ծրագիրներու մշակումով եւ ոչ-հայկական վարժարաններ թափանցումի համարձակ քայլերով:

Վաղուան հայութիւնն են այս տղաքը, եւ կարելի չէ զանոնք անպաշտպան ձգել օտար վարժարաններու երդիքին տակ, ուր ազգային ինքնութիւն, դիմագիծ եւ արժանապատուութիւն բառարանային բառեր են միայն եւ ոչ՝ ապրելու իրականութիւններ:

Կայ նաեւ աշխատանքի անտեսուած այլ դաշտ մը. հայկական նորակազմ գաղութներու միջավայրը: Պէտք է հասնիլ Եւրոպայի եւ Նախկին Խ. Միութեան երկիրներու տարածքին տարտղնուած հազարաւոր հայ երիտասարդներու, որոնք հայապահպանման ո՛չ մէկ կըռ-

ւան ունին այսօր իրենց շուրջ, զուրկ են վարժարանէ, եկեղեցիէ եւ գաղութային կազմակերպ կեանքէ: Հսկայ թիւ մըն են անոնք, որոնք մարդկային իրենց ներուժով «օտարին ջաղացքին ջուր կը լեցնեն» միայն:

Իսկ ի՞նչ ըսել այն «ներքին» քանակին մասին, որ յաճախ մեր մէջն է, մեր շուրջն է, սակայն, մեզմէ հեռու է: Երիտասարդներու կարելոր թիւ մը այսօր կոնակ դարձուցած է մեր միութիւններուն, որովհետեւ կեանքի ծանր պայմաններու բերումով այլեւս ի վիճակի չէ կամաւոր աշխատանք տանելու:

Կան նաեւ ուրիշներ, որոնք նոր աշխարհի ազատութիւններէն տարուած՝ չեն կրնար կամ չեն ուզեր յարմարիլ միութենական անդամակցութեան խիստ պայմաններուն եւ կը նախընտրեն համակիր մնալ՝ քան երդուեալ միութենական ըլլալ:

Ու դեռ, սրընթաց զարգացող այսօրուան աշխարհին մէջ, նկատելի է, որ երիտասարդութեան մեծ թիւ մը դարձած է դժուարահաճ: Երիտասարդներ չեն բաւարարուիր այլեւս փոքր յաջողութիւններով, դուրսի նուաճումները տեսնելով՝ կը փափաքին նաեւ միութիւններու ներսը կրկնել զանոնք, ու երբ չեն յաջողիր, յուսախաբութիւններ կ'ապրին, դառնութիւններ կ'ունենան եւ ընդմիջտ կը հեռանան:

Ասոնք բոլորը լուրջ մտահոգութիւններ են, որոնց հետ կարելի չէ հաշտ ապրիլ: Կացութեան չհամակերպիլը հարցերու լուծման առաջին քայլն է, որուն կը հետեւի նորութիւններու փնտռտուքի հանգրուանը: Նորութիւն՝ ծրագիրներու, նորութիւն՝ անոնց ներկայացման ձեւերու, նորութիւն՝ կառուցային մօտեցումներու մէջ:

Իսկ այս բոլորէն ետք միայն կարելի պիտի ըլլայ մտածել քանակը որակի վերածող դաստիարակչական հսկայ աշխատանքին մասին:

Հ.Մ.Ը.Մ.՝ ՄԱՐԴԱԿԵՐՏՈՒՄԻ ԵՒ ՀԱՅԱԿԵՐՏՈՒՄԻ ԴԱՐՔՆՈՑ

Վարագ Քինյ. Յովսեփեան
ԱԹԵՆՔ



Ինսուկն չորս տարիներ առաջ, ահաւոր նախճիրէն, Յեղասպանութեան արիւնաթաթախ օրերէն ու Միջագետքի հրաշէկ անապատներէն ու գերեզմաններու ամէնէն դժոխայիններէն յարուլթիւն առած ու նոր տուն վերադարձած, կիսամերկ ու անօթի, հայ կեանքի խանդավառ օրերուն, խումբ մը գաղափարապաշտ հայորդիներ, որոնք մեր ժողովուրդի գալիքով մտահոգ, 1918 Նոյեմբերին, Պոլսոյ մէջ պիտի կոթողէին յաղթանակի եւ վերածննդեան ծածանող դրօշը, աստուածատուր եւ մեսրոպագիւտ հայոց ալքուբենի փողփողուն տառերով ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ՝ Հ.Մ.Ը.Մ.ը:

Պատմութեան համար թուականները նշանակութիւն չունին՝ եթէ յատկանշական հանգրուաններ չեն կազմեր անոնք այդ պատմութեան էջերէն ներս:

Միութեան կազմութեան գաղափարը արդէն իսկ կար հիմնադիրներու մտքին մէջ, երբ կեանքի կը կոչուէր մարզական այս միութիւնը, երբեմնի Օսմանեան մայրաքաղաքին մէջ, հետեւաբար, հրամայական կարիքի մը արդիւնք էր անոր հիմնադրութիւնը եւ ոչ թէ պարագայական անհրաժեշտութիւն մը:

Արդարեւ, ամէն մէկ ամեակ անկասկած յաղթանակի տօն է այսօր ժողովուրդի մը համար, որ իր հարազատ գաւկիին մէջ կը տեսնէ ու կը վկայէ վերյայտնութիւնը իր անցեալին, իր արժէքներուն ու իր փառքին: Համաշխարհային Ա. պատերազմը խորտակած էր հայ երիտասարդութիւնը ու ընկճած անոր մարմինն ու հոգին: Սերունդ մը պէտք էր գար մտքով ու մարմնով առողջ, որպէսզի կարելի ըլլար մտածել հայութեան վերականգնումի ու վերապրումի մասին: Ահա թէ ուրկէ ծագում կ'առնէր մարզանքն ու սկաուտութիւնը մէկ կազմակերպութեան մէջ միաւորելու գաղափարը, որովհետեւ մարզանքը հոգիով ու մտքով առողջ սերունդ մը պիտի պատ-

րաստէր, իսկ սկաուտութիւնը այդ սերունդը պիտի դաստիարակէր գիտակցութեան, նուիրումի եւ հայրենասիրութեան ոգիով: Ահա այս մտասեւեռումն ու իտէալն էր որ կեանքի կոչեց Հ.Մ.Ը.Մ.ը:

Քաղաքական փոթորկալից ու աննպաստ պայմաններու եւ ժամանակներու մէջ հայ ժողովուրդի երկունքէն ծնած ու պատմութեան թատերաբեմ նետուած Հ.Մ.Ը.Մ.ը, պատմութեան էջե-

րուն մէջ չմնաց ու պատմութիւն չդարձաւ, այլ պատմութիւն կերտեց, սերունդներ կրթեց ու դաստիարակեց ու այդ կամաւոր բանակները պատրաստեց այսօրուան հայրենիքին համար: Ամէն մէկ կակուղ թաթիկ, մրջնիկ, գայլիկ, սկաուտ, արենոյշ կամ վարիչ պատասխանատու, որոնք անցան իր շարքերէն, կրնան անվերապահօրէն հաստատել, որ Հ.Մ.Ը.Մ.ը իրենց համար սովորական միջավայր մը չեղաւ, մարդերու համախմբում մը չդարձաւ, այլ դարձաւ դպրոց մը, օճախ մը, դարբնոց մը մարդակերտումի եւ հայակերտումի, որ նորահաս սերունդներուն ներարկեց ազգային բարձր ոգի ու հայրենաբնակ իտէալներու իրականացման պատմուղիով անսայթաք ընթանալու խոր գիտակցութիւն: Հ.Մ.Ը.Մ.ը որպէս մեր կեանքի հրաշքներէն մէկը, այնուհետեւ շուտով պիտի ընդարձակուէր, փրկարար շարժումի մը պիտի վերածուէր ու իր Եռագոյն դրօշի ծալքերուն տակ համախմբուած երկսեռ երիտասարդութեան ճամբով, գաղափարապաշտ ոգիով ու նախանձ առթող յաղթանակներով եւ մանաւանդ գործով, խօսո՛ւն գործով պիտի դառնար «կամք անսասան, կամք անվեհեր», ու իր վսեմ նշանակին ու նշանաբանին թեւերուն տակ բոլորուած երիտասարդութեամբ պիտի քայլէր Սփիւռքի ճամբաներէն, որպէս «չըջուն հայրենիք» իր «Յառաջ, նահատակ» քայլերգով, իր յաւերժախօս պատգամով, ու միշտ բարձրանալու եւ բարձրացնելու աննկուն կամքով պիտի գրէր իր պատմութիւնը: Սկաուտական թէ մարզական իր խրոխտ շարքերով Հ.Մ.Ը.Մ. պիտի դառնար ջերմ գուրգուրանքի ու անխառն հոգածութեան առարկայ, որովհետեւ մեր ժողովուրդը իր հարազատ գաւկիին մէջ պիտի տեսնէր երբեմ-

նի նաւասարդեան մարգահանդէսները, բանակումները, խարուկահանդէսները, յաջորդական փառատօններն ու շահած յաղթանակները: Հ.Մ.Լ.Մ. իր փառքով պիտի դառնար մեր ինքութեան միւլտիմեդիա աւագանը, մեր օրերու Պրոպագանդիկ, որուն ջուրով մեր ժողովուրդը պիտի սրբէր իր ճակատը, հայութեան ու հայրենիքին ծառայելու անմնացորդ հաւատքով ու կամքով:



ԾԱ-ամեակի այս օրերուն, երբ ուրուազրծային անդրադարձումով մը կը փորձենք վերարժեւորումը ընել Հ.Մ.Լ.Մ.ի տասնամեակներու գործունէութեան, Հ.Մ.Լ.Մ.ը կու գայ ըսելու մեզի, որ անժառանգ մնալու դատապարտուած միութիւն մը չեղաւ ինք, այլ դարձաւ յաւիտենականութեան ճամբաներու անխոնջ ուղեորը ու մեր վերանորոգ կամքին արտայայտութիւնը: Փաստը՝ մեր կենսունակութեան, գրաւականը՝ մեր անմահութեան:

ԾԱ-ամեայ յանձնառութիւն: Երկար ու դժուարին ճամբայ, ուրկէ անցաւ Հ.Մ.Լ.Մ. իր հիմնադրութենէն մինչեւ այսօր:

Հայրենիքին համար ծնունդ առած ու կեանքի կոչուած ու հայրենիքին ծառայելու կոչումով ճամբայ ելած Հ.Մ.Լ.Մ.ը շօշափելի իրականութիւն է այսօր հայրենիքէն ներս: Չերագներու, Քաջունիներու եւ Խոյեաններու երազը կեանք գգեցած

է հայրենի հողին վրայ, որուն տեսիլքով արեցան անոնք ու այդ երազի իրականացման ճամբուն վրայ իրենց աչքերը փակեցին: Հայրենիքի վերանկախացումէն անմիջապէս ետք, Հ.Մ.Լ.Մ. եղաւ առաջին կազմակերպութիւնը, որ իր սկաուտական տարագով ու Եռագոյն փողկապով պաշտօնապէս մուտք գործեց հայրենիք ու Մաղկաձորի բարձունքին, Արարատի յաւերժախօս նայլածքին տակ, իր ձեռքով կոթողեց հայ ժողովուրդի ազատութեան դրօշը՝ յաղթապանծ Եռագոյնը:

Հ.Մ.Լ.Մ. հոն է այսօր, մայր հողին վրայ, Սեւանի ափին ու Արարատի ստորոտին. ան իր նոր բոյնը կը շինէ ու կ'երգէ. «Ազատ հայրենիք, հօր հայրենիք, իմ նոր հայրենիք»:

Խորապէս համոզուած ենք, որ ԾԱ-ամեայ յանձնառութեամբ դօտեպինդ, Հ.Մ.Լ.Մ. ներկայի իր համագաղութային լայնացանց կառոյցով ու գալիքի նոր յանձնառութիւններով պիտի շարունակէ իր նուիրական դերն ու առաքելութիւնը, փառքի նոր դափնիներ աւելցնելով գինք ծնող ժողովուրդի ճակատին:

Յառա՛ջ, մի՛շտ յառա՛ջ...

Թող յաւէ՛տ օրհնեալ ըլլայ յիշատակը երիցս երանեալ հիմնադիր ռահվիրաներուն եւ փառք ու պատիւ Հ.Մ.Լ.Մ.ին:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԿՈՒՌՔԵՐԸՆ ՄԷԿԸ՝ ՄԱՆՈՒԷԼ ԱԼԹՈՒՆԵԱՆ

Օրը կէսօր եղած չէ տակաւին: Հ.Մ.Ը.Մ.ի հոգերով ապրող մարդիկ իրենց ամենօրեայ գրոյցը կը կատարեն գաւաթ մը սուրճի շուրջ: Ծխախոտին ծուխը պատած է չորս կողմը, ինչ որ նշան է գրոյցին տաք ըլլալուն: Խօսակիցները սովորական մարդիկ չեն: Հ.Մ.Ը.Մ.ական ֆուտպոլի երբեմնի կուռքերն են, որոնք ամեն առաւօտեան նման, այդ օր ալ հաւաքուած են իրենց ընկերոջ խանութը՝ խօսելու Հ.Մ.Ը.Մ.ի ներկային ու անցեալին մասին, յիշելու հին ու նոր դէմքեր եւ դէպքեր: Այդ օր, սակայն, անոնք ունին երկու հիւրեր, որոնք եկած են իրենց յիշատակելի օրերէն տեղեկութիւններ քաղելու այլ կուռքի մը մասին, որ երկու տարի առաջ, անաղմուկ հեռացաւ այս աշխարհէն: Ոչ ոք յիշեց զինք: Ոչ մէկ տեղ ոչ մէկ տող գրուեցաւ իր մասին:

Զրոյցը ունի քանի մը ամսուան պատմութիւն եւ մասնակիցներէն մէկը՝ Սարգիս Աճէմեանը, իր կարգին, դարձած է յուշ եւ յիշատակ, մինչ մնացեալ խօսակիցները «ճոքին» (Յովհաննէս Յուսամեանը), Լեւոնը (Ալթունեան) եւ Մարկարոսեանը (Յարութ) կը շարունակեն իրենց ամենօրեայ հանդիպումները, նոյն թափով ու մթնոլորտով:



Հիւրերը գրուցակիցներուն կը հարցնեն Մանուէլ Ալթունեանին մասին, որ իր մահկանցուն կնքեց Մ. Նահանգներու մէջ:

Մարկարոսեան.- Մանուէլը շատ կանուխ միացաւ Հ.Մ.Ը.Մ.-ին: Ներգաղթին, երբ «Բաղրամեան» խումբը ստեղծուեցաւ եւ կարգ մը Հ.Մ.Ը.Մ.ականներ իրենց խումբը ձգելով «Բաղրամեան»ին միացան՝ ֆուլթպոլիստներու բաց մը ստեղծուեցաւ: Օրին, պատասխանատուները դիմեցին երկրորդական խումբերու՝ հոնկէ մարզիկներ ներկայացուցչական խումբ բերելու համար: Մանուէլը այդ մարզիկներու շարքին էր:

«Ճոքի».- Մինչ այդ, Մանուէլը կը խաղար ատանացիներու «Փօլիկարպոս» խումբէն: Ատանայի հայրենակցական միութիւնը կրցած էր պետական արտօնութիւն ձեռք ձգել ֆուլթպոլի խումբ մը ունենալու համար, Մանուէլն ալ կը խաղար այդ խումբէն:

Լեւոն.- Ասիկա պէտք է ըլլայ 1945-ին: Մանուէլը արդէն 17 տարեկան էր:

Սարգիս.- Մանուէլը Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի պատմութեան ամէնէն երկար ֆուլթպոլ խաղացողներէն մէկը եղած է: 16 տարի, 1945-1961, ան կրած է Հ.Մ.Ը.Մ.ի շապիկը:

Մարկարոսեան.- Մանուէլը խաղացած է երկու-երեք սերունդի հետ: Սկիզբը ան խաղացած է Համագասպի, Յովհաննէս Նազարեանի,



Ժիրայր Ուրֆալեանի, Կիրակոս Գալաթեանի, Սա-
աթճիի, Ժողէֆ Նալպանտեանի եւ այդ սերունդի տղոց
հետ:

Լեւոն.- Յետոյ խաղացած է Տրդատին, Յովհաննէս
Նազարեանին, Մարկարոսեանին, Շամիրն՝ Գէորգ Ոս-
կերիչեանին, Պետրոս Վէքիլեանին եւ Սարգիս Ազնա-
ւուրեանին հետ:

«Ճոքի».- Մանուէլը մեր սերունդին հետ ալ դաշտ
իջած է: 1960-ականներու սկիզբը մեր խումբին մաս կը
կազմէին Մանուէլը, Աբօն, Զաւէնը, Եղիշը, Օննիկը,
Կարպիսը, Լեւոնը, Բրինձեանը եւ ուրիշներ:

Մարկարոսեան.- Մանուէլը սկիզբը յառաջապահ էր,
յետոյ՝ եղբօրը գալին ետք, սկսաւ միջնապահ դիրքի
վրայ խաղալ: Տարիներ ան մաս կազմեց նաեւ Լիբանա-
նի ազգային հաւաքականին: Հ.Մ.Ը.Մ-ին հետ երկու ան-
գամ շահեցաւ Լիբանանի բաժակը (1948, 1962) եւ 4 ան-
գամ ալ Լիբանանի ախոյեանութիւնը (1946, 1948, 1951,
1955): Վարդիվառ Յովհաննէսեանը այս մասին
կը պատմէ իր գիրքին մէջ:

Լեւոն.- Մանուէլը Մար Մըխայէլ ծնաւ, 1928-ին: Էշրէֆիէի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ ձեմարանը յաճախեց եւ վերջն ալ
գործի ասպարէզ նետուեցաւ: Պատերազմէն առաջ ան Մ. Նա-
հանգներ գնաց, ամուսնացաւ եւ հոն ալ մահացաւ:

«Ճոքի».- Մանուէլը շատ հանդարտ էր, բայց դաշտին վրայ
ջղային կը դառնար...

Մարկարոսեան.- Ամէնէն շատ եղբօրմէ կը ջղայնանար:

Լեւոն.- Գնդակը քովս կ'ըլլար, 3-4 հոգի տրիպը կ'ընէի,
կոլ կը նշանակէի, վրաս կը պոռար, որ ինչո՞ւ գնդակը իրեն
չեմ'նետած: Լաւ, կո՞լ նշանակեցի, կ'ըսէի, չէր հանդարտեր:

«Ճոքի».- Օր մը Բրինձեանին ըսաւ. «դուն արիւն չունի՞ս,
չարժէ՞ քիչ մը...»:

Մարկարոսեան.- Մանուէլը տիսիփլիւնի մարդ էր. ժամը-
ժամուն կը քնանար: Փորձերէն վերջ, իրիկունները քովս կու
գար եւ միասին 2-3 ժամ կը վազէինք:

Սարգիս.- Անգամ մը Թուրքիոյ ազգային խումբը եկած
էր խաղ մը խաղալու: Խաղի ժամանակ, մինչեւ հիմա կը յի-



Եղբ. Մանուէլ, նստած,
ձախէն երկրորդ:

չեմ, թուրքերը կը պոռային «պզտի կը բռնեցէք»: «Պզտիկ»ը
Մանուէլն էր:

Մարկարոսեան.- 1940-ական տարիներուն, Լիբանանի հա-
ւաքականին առջեւի գիծին 5 խաղացողներն ալ Հ.Մ.Ը.Մ-էն
էին. Մանուէլը, Ստեփանը, Վարդիվառը, Շատարեւեանը (Մի-
շէլին հայրը) եւ Սարգիս Ազնաւուրեանը: Մարտափելի հըն-
գեակ մըն էր:

Անգամ մը Սուրբոյ գինուորականներու խումբը կը խա-
ղար օտար խումբի մը դէմ: Ես ձայնասփիւռով կը հետեւէի
մրցումին: Այդ օրերուն տակաւին պատկերասփիւռ չկար:
Դադարին, խօսնակը ըսաւ, որ տակաւին այսպէս ձախ ծայր
եկած չէ:

«Ճոքի».- Մանուէլը թէ՛ կը խաղար եւ թէ՛ խումբը
կը դարձնէր: Տիպար մարզիկ մըն էր: Ի՛նչ, այդ ժամանակ
Ֆուլթայոլիստները տարբեր մօտեցում ունէին Հ.Մ.Ը.Մ-ին
հանդէպ: Անոնք երբեք չէին ուզեր պարտուիլ: Մենք գիտէ-
ինք, որ ամէն գոհողութիւն պէտք է ընենք, որպէսզի մեր ժո-
ղովուրդը դաշտէն լալով տուն չերթայ:


Մարկարոսեան.- Մանուէլը երեւոյթ էր, դժուար թէ անոր
օրինակը դիւրին-դիւրին կրկնուի:



Զրոյցը կը շարունակուի: Նիւթը նիւթ
կը բանայ եւ Հ.Մ.Ը.Մ.ական յիշատակնե-
րու ամբողջ կօժիկը կը քակուի դիմացդ:
Կը խոստանաս այցելել նաեւ ուրիշ առի-
թով, ուրիշ դէմքերու մասին եւս վկայու-
թիւններ քաղելու համար: Ու երբ հրա-
ժեշտ կու տաս խօսակիցներուդ, կ'անդ-
րադառնաս, որ ժամուան մը զրոյցը, խօ-
սակիցներու կենդանի օրինակներով, որ-
քան Հ.Մ.Ը.Մ.ականութիւն տուած է քեզի,
10 դասախօսութենէ եւ 100 յօդուածէ
չա՛տ աւելի:

1948. Եղբ. Մանուէլ (մէջտեղը նստած),
Լիբանանի ազգային խումբին հետ:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱԲՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ



Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային Ա. ողիմպիականի տողանցք:

Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989)
ԱՆՏԻՊ, ԼԱ. ՍՍՍ

Երկու խումբերն ալ գնահատելի կանոնաւորութեամբ եւ ոգեւորութեամբ մինչեւ վերջ շարունակեցին խաղը, որ վերջացաւ 0-1 Պէյրութի յաղթութեամբ:

«Նոյն իրիկունը, պանդոկ Ռոտ էլ Ֆարաթի սրահին մէջ, երեք քոյր մասնաճիւղերու մարզիկները ունեցան հաւաքոյթ մը, ուր շինիչ ու խանդավառող խօսքեր արտասանեցին Շրջանային Վարչութեան ատենապետ տոքթ. Պէզճեան, անդամներ տոքթ. Գասապեան, Վ. Թորոսեան: Խօսեցան նաեւ մասնաճիւղերու կողմէ Պոյաճեան, Լուտեր, Աւագեան, խմբապետներու մարզիկներ, որոնք բոլորն ալ զգացուցին ու շեշտեցին Հ.Մ.Ը.Մ.ի կարեւորութիւնը եւ իրենց նուիրումը անոր

վերելքին» («Չայ սկաուտ», Փարիզ, 1930, թիւ 7):
Հալէպի մէջ կատարուած միջ-մասնաճիւղային հանդիպումին կը զուգահիշէր Շրջանային Վարչութեան մէկ տարուան գործունէութեան շրջանին փակումը: Պէտք էր գումարուէր պատգամաւորական ժողով եւ ընտրուէր նոր վարչութիւն: 21 Ապրիլ 1930-ին, Փութպոլի մրցումներուն ներկայ էին երեք գլխաւոր մասնաճիւղերուն ներկայացուցիչները, որով այս հարցը հոն քննութեան առարկայ դարձնելէ ետք, «Ներկայ եղող մասնաճիւղերու միաձայնութեամբ ներկայ Շրջանային Վարչութիւնը» կը վերընտրուի:

Շրջանային Վարչութիւնը, միջ-մասնաճիւղային մրցումներէն ետք, Հալէպի մասնաճիւղին կը գրէ 2 Մայիս 1930 թուակիրով.

«Շրջանային Վարչութիւնս մեծապէս գնահատելով ախոյեանական մրցումներու առթիւ քոյր մասնաճիւղերուն հանդէպ Ձեր ցոյց տուած եղբայրական ազնիւ ոգին եւ անթերի հիւրասիրութիւնը, կու գայ շնորհաւորելու խորին շնորհակալութիւններով:

«Այս հանդիպումը առիթ մը եղաւ անգամ մըն ալ ապացուցանելու, թէ Հալէպի մեր մասնաճիւղը կը ներշնչէ բարձր փստահութիւն եւ կը գտնուի միութեանս նպատակին ամէն գնով ծառայելու կոչուած ողջմիտ եւ անձնուէր ձեռքերու մէջ»:

Դամասկոսի վարչութեան ողիմպիական սարքելու ծրագիրը կ'իրականանայ: Առ ի գիտութիւն կը հաղորդէ Շրջանային Վարչութեան, որմէ կը ստանայ հետեւեալ նամակը: «Երբ մասնաճիւղ մը նման ձեռնարկի մը ծրագիրը կ'ունենայ, անոր ձեռնարկելէն առաջ, պէտք է Շրջանային Վարչութեան վաւերացումը ստանայ. նկատելով, որ գուցէ անտեղեակ էք այս կէտին, Շրջանային Վարչութիւնը կը թոյլատրէ գլուխ հանել ձեռնարկը՝ դաշտահանդէս կամ Նաւասարդեան խաղեր անունին տակ»: Շրջանային Վարչութիւնը կը շարունակէ գրել. «Որոշուած ըլլալով Ձեր նոր ըսկառուները քննութենէ մը անցընել, կը հրահանգենք ցնոր տնօրինութիւն յետաձգել անոնց երդման արարողութիւնը:

«Շրջանային Վարչութիւնս ձեր միջոցով կու գայ իր շնորհակալութիւնը յայտնելու մասնաճիւղիդ Փութպոլի Ա. խումբին, այն բարձր ոգին եւ կարգապահութեան համար, զոր ցոյց տուաւ ախոյեանական մրցումներուն առթիւ: Կը մաղթենք որ յառաջիկայ տարի աւելի մեծ յառաջդիմութիւն մը ցոյց տայ նոր հանդիպումներու ընթացքին»:

Շրջանային Վարչութեան անդամ Տաճատ Սրապեան Հալէպի մէջ տեսնուած ըլլալով Գրքը Խանի եւ Ալեքսանտրէթի

1931. Յ.Ս.Ը.Ս.ի Պէյրուսի ֆութպոլի խումբը:



ներկայացուցիչներուն հետ, Շրջանային Վարչութիւնը անմիջապէս Ծրագիր-Կանոնագիր մը կը դրկէ տողթ. Լեւոն Մինասեանին, իսկ նամակ մը կը գրէ Ալեքսանտրէթ՝ Համագասպ Փանոսեանին, որպէսզի Հ.Ս.Ը.Ս.ը գորացնէ:

Թրիփոլի, Ապրիլի կիսուն, 25 անդամներու իր արշաւը կ'ունենայ դէպի Զղարթա: Կ'որոշէ սկաուտներուն թիւը բարձրացնել գոնէ քսանի: կը գրէ Շրջանային Վարչութեան փող եւ թմբուկ հայթայթելու: Վարչութիւնը կը ծրագրէ «գեղեցիկ ու փառաւոր» ակումբ մը վարձել: Վարչութիւնը գլուխ կը հանէ գիշերային կանոնաւոր դասընթացքի կիրարկումը, ինչպէս նաեւ գործադրութիւնը շուէտական մարզանքներու բոլոր անդամներուն:

Թրիփոլի մասնաճիւղը, Մայիս 1930-ին, իր ընդհանուր անդամական ժողովին կ'ընտրէ նոր վարչութիւն, որուն մաս կը կազմեն Արիս Աթմաճեան, Վահան Գազանճեան, Յ. Առաքելեան, Մ. Արծրունի, Յ. Ազըլբեան, Գ. Փափագեան, Հ. Ծրոեան, իսկ վարչութեան կողքին աշխատելու համար կը հրաւիրուին Կիրակոս Պոյաճեան եւ Յ. Պալեան:

Նորընտիր վարչութիւնը, որպէսզի գործնականացնէր գիշերային դասընթացքի ծրագիրը ու գարկ տար իր անդամներուն իմացական ու ֆիզիքական դաստիարակութեան, պէտք էր վարձէր յարմարագոյն վայրը, ուստի «Ազգային երկսեռ վարժարանի վերնայարկի պարապ, օդաւէտ, լուսաւոր եւ ընդարձակ երկու սենեակներուն համար տեղւոյս թաղական խորհուրդը մեր առաջարկը սիրալոթար ընդունեց ամսական կէս օսմ. ոսկիի վարձքով»:

Վարչութիւնը իր նիւթական անձուկ վիճակին հետեւանքով անկարող տակաւին իրականացնելու սկաուտական շարժումը, սակայն «Որպէսզի մեր սիրելի եղբայրները

որեւէ կերպով իրենց պարապ օրերը կամ ժամերը օգտագործեն, որոշուեցաւ Կիրակի օրերը, եկեղեցիէն ետք, վարժարանին բակին մէջ, շուէտական մարզանք կատարել, ընթերցանութեամբ պարապիլ, իսկ կէսօրէ ետք, ֆութպոլ եւ պտոյտով զբաղիլ», («Տեղեկագիր, 24 Յունիս 1930»):

Շրջանային Վարչութիւնը գնահատելով Թրիփոլի մասնաճիւղին թափած ճիգերը, կը վաւերացնէ նորընտիր վարչութիւնը, կը վաւերացնէ նաեւ Պէյրուսի վարչութիւնը, որ ընտրուած էր 22 Յունիս 1930-ին գումարուած անդամական ընդհանուր ժողովին: Շրջանային Վարչութիւնը իր վաւերագիրներուն մէջ միշտ կը շեշտէ, որ վարչութիւններու իւրաքանչիւր անդամը իբր նշանաբան ունենայ «Ճշգրտականութիւն, նուիրում, ծառայութիւն» բառերուն խոր իմաստը:

Պէյրուսի մասնաճիւղին 22 Յունիս 1930-ին գումարած անդամական ընդհանուր ժողովին, վարչութեան ատենապետ Կ. Պատուհասեանի գեկուցումէն ետք, ժողովը՝ բաղկացած 110 ներկայ անդամներից եւ Շրջանային Վարչութեան անդամներից, գլխաւորաբար կը զբաղի սկաուտ խմբապետ Աւագեանի կախակալումով. «Ընդհանուր ժողովը լսելէ ետք երկուստեք ներկայացուած տեսակէտները, հաստատեց վարչութեան որոշումը»: Իսկ գանձապահ Օննիկ Պէօճէքեանի հաշուետուութենէն կը պարզուի, որ «մուտքը եղած է աննախընթաց, թէեւ սնտուկը կը ներկայացնէր բաւական կոկիկ բաց մը»: Ժողովը գանազան բանաձեւերէն կ'ընդունի տողթ. Պէգճեանինը, «թէեւ գանազան պատճառներով ձեռք ձգուած արդիւնքը սպասուածին չափ զոհացուցիչ չէ եղած, սակայն վարչութեան աշխատութիւնն ու բոլորած գործունէութիւնը գնահատելի է» (Ատենագրութիւն, 22 Յունիս 1930-ի Ընդհանուր ժողովի):

1957. Յ.Ս.Ը.Ս.ի Դամասկոսի ֆութպոլի խումբը:



Այս բանաձեւումի հաստատումէն ետք, կ'ընտրուին Գառնիկ Ազիրեան, Ռուբէն Մաւրապետեան, Թադէ Գարապալապետեան, Կ. Պատուհասեան, Պ. Շահինեան, Պերճ Աւետիսեան, Յովհաննէս Սերոբեան եւ Օննիկ Պէօճէքեան:

Անդամական ընդհանուր ժողովը նորընտիր վարչութեան ուշադրութեան կը յանձնէ՝ ա. ապահովել հաւաքատեղի մը, բ. դաշտը աւելի կանոնաւորել, գ. նիւթական հասոյթին թափ տալ, դ. հետաքրքրուիլ անոնցմով, որոնք կու գան պարզապէս Ֆուլթոն խաղալու, ե. կազմակերպել առողջապահական նիւթերու շուրջ դասախօսութիւններ, գ. անդամները բժշկական քննութենէ անցնել:

Հալէպ մեծ ճիգով կը յարգարէ թենիսի դաշտը, կը հաստատէ պարֆիթս, պատ փարալէլ, ու 8 Յուլիսի նիստին կ'որոշէ Սեպտեմբերին ողիմպիական կատարել: Այս ձեռնարկին կարգադրութիւններուն համար կ'ընտրուի յանձնախումբ մը՝ բաղկացած Ճորճ Միսիրեանէ, Անդրանիկ Աթթարեանէ եւ Փիլիպպոս Դերձակեանէ:

Հալէպի վարչութիւնը իր 5 Օգոստոսի նիստին կ'արտօնէ սկաուտական բանակումը՝ Պիթիաս, եւ այս առթիւ կ'որոշէ մեկնող սկաուտներու ծնողներէն արտօնագիր առնել, «որպէսզի դէպքի մը պարագային վարչութիւնը պատասխանատու չըլլայ» (Ատենագրութիւն, 5 Օգոստոս 1930):

Շրջանային Վարչութիւնը իր շրջանի անդամներուն իրաւական հանգամանքը աւելի ամուր գետնի վրայ դնելու մտադրութեամբ, 3 Յուլիս 1930-ին, մասնաճիւղերուն կը դրրկէ հետեւեալ շրջաբերականը.

«Շրջանիս Հ.Մ.Ը.Մ-ի անդամները, անդամատետրներու գործածութեան դրուած ժամանակէն սկսեալ, կարճ ժամանակի մը ընթացքին, պարտին փոխել իրենց նախկին անդամատետրները, լեցնելով նաեւ առաջարկ անդամակցութեան երկու թուղթեր:

«Առաջարկ անդամակցութեան թուղթերը կը գրուին դիմողին կողմէ, կցելով իրենց երեք փոքր լուսանկարները՝ սկաուտները իրենց տարագով, որոնց երկուքը առաջարկ անդամակցութեան թուղթերուն եւ երրորդը՝ անդամատետրին վրայ փակցուելու համար:

«Թեկնածուին առաջարկը մասնաճիւղի վարչութեան կողմէ ընդունուելու պարագային, վերջինը առաջարկ անդամակցութեան օրինակներէն մէկը իր քով պահելով՝ միւսը կը դրկէ Շրջանային Վարչութեան:

«Մասնաճիւղի վարչութեան առաջարկ անդամակցութեան թուղթին հետ, Շրջանային Վարչութեան կը դրկուին թեկնածու անդամին համար պատրաստուած եւ իր կողմէ վաւերացուած նոր անդամատետրները, որպէսզի ենթարկուի Շրջանային Վարչութեան ալ վաւերացումին ու ստանայ շրջանի անդամական թիւը ու վաւերացուի»:

Մեծ եռանդով գործի ձեռնարկող Պէյրութի մասնաճիւղի վարչութիւնը առաջին օրէն իսկ խճողուած օրակարգ կ'ունե-

1936. սկաուտներ Պէյրութի քաղաքապետարանի դաշտին վրայ:



նայ: Ամրան եղանակին, սկաուտներու պարբերական դասախօսութիւններուն համար դիմում կը կատարէ Ազգ. վարժարանին, անոր սենեակներէն մէկը ապահովելու համար: Լաթաքիոյ եւ Թրիփոլի մասնաճիւղերուն հաշուոյն կը փնտռէ ու կը գրէ Դամասկոս՝ գնելու փող, թմբուկ եւ սկաուտական այլ առարկաներ: Դամասկոսի փափաքին զոհացում տալու համար կը դրկէ քանի մը Ֆուլթոնիստներ՝ զօրացնելու իրենց խումբը միջազգային խաղի մը առիթով: Կարգ մը գործիքներու գնումը ապահովելու համար, 1200 տոմսակէ բաղկացած վիճակահանութիւն մը կը կազմակերպէ, կը կազմակերպէ նաեւ արշաւներ, միշտ հետամուտ ըլլալով գտնելու ակումբի համար յարմարագոյն վայրը: Կ'որոշէ մասնակցիլ իսլամ ըսկաուտներու բանակումին՝ Պհամտունի մէջ. այս վերջին որոշումին համար, Շրջանային Վարչութեան 29 Յուլիս նամակին մէջ դիտել կը տրուի:

«Տեղեկացանք, որ ինչպէս մեր միւս մասնաճիւղերէն ոմանք, դուք ալ հրաւէր ստացած էք մասնակցելու Օգոստոս 1-10 Պհամտունի մէջ իսլամ սկաուտներու նախաձեռնութեամբ կազմակերպուած բանակումին: Այս առթիւ բարի եղէք Փետրասիոնին գրելու, որ միութիւնս Սուրիոյ եւ Լիբանանի շրջանին մէջ ունի իր վերին մարմինը, որը միայն իրաւասու է շրջանին վերաբերեալ ընդհանուր բնոյթ ունեցող խնդիրները կարգադրելու: Այսպիսի պատասխան մը անոնց պիտի գգացնէ, թէ իրենք գործ ունին ո՛չ թէ սկաուտական կամ Ֆուլթոնի խումբի մը հետ, այլ՝ կազմակերպութեան եւ այսպէսով միութեանս վարկը պիտի բարձրանայ անոնց մօտ:

«Այս բանակումին Սուրիոյ եւ Լիբանանի Հ.Մ.Ը.Մ-ի ըսկաուտութեան անունով հաճեցէք նուազագոյնը երեք ըսկաուտ առաջնորդներ դրկել»:

Հալէպի մասնաճիւղի ընդհանուր անդամական ժողովը տեղի կ'ունենայ 17 Օգոստոսին: Վարչութեան վեց ամսուան տեղեկագիրէն կը պարզուի, որ հայկական լիկ մաշը ունեցած է իր «կնճիւր», որ տակաւին հարթուած չէ: Ժողովը կը ըզ-

1936. Հ.Մ.Ը.Մ.ի Պեյրուսի սկաուտներ:



բաղի անդամներու յարաբերութեան հարցով, դաշտի շինութեամբ ու բարեկարգումով եւ այլ հարցերով: Այս ընդհանուր անդամական ժողովին վարչութեան անդամ կ'ընտրուին, Միսաք Ապաճեան, Ճորճ Միսիրեան, Լուտեր Մասպանաճեան, Ալպէր Զաքարեան, Անդրանիկ Աթթարեան, Խորէն Հելվաճեան եւ Միհրան Կարապետեան:

Նորընտիր վարչութիւնը յարգարուած Փութպոլի դաշտին հետ լրացած ու պատրաստ կը գտնէր նաեւ թենիսի դաշտը, սակայն «նկատի ունենալով թենիսի ծանր աշխատանքը եւ վարչութեան անդամներուն չափազանց զբաղած վիճակը, որոշուեցաւ ընտրել Հ.Մ.Ը.Մ.ական հինգ հոգիէ բաղկացած յանձնախումբ մը, որ վարչութեան համարատու ըլլալով հանդերձ, ազատութիւն ունենայ թենիսի վերաբերեալ բոլոր գործառնութիւններուն մէջ: Յանձնախումբի անդամ նշանակուեցան՝ Միսակ Պրժեան, Ճորճ Միսիրեան, Վազգէն Սէլեան, Զարեհ Ըբրահեան եւ Վազգէն Մուրատեան»:

Թրիփոլի մասնաճիւղը հոգեպինդ կ'աշխատի միութեան վերելքին սատարող բոլոր ճիւղերուն մէջ, ջանք չի խնայել կահաւորելու ակումբը՝ հայթայթելով աթոռ, նստարան, սեղան, պատկեր: Իր դիմումին՝ Քելէկեան որբանոցէն որպէս նուէր կը ստանայ 40 սուլիչ, 40 փողկապ, 11 գօտի: Կը շարունակէ ժողովրդային լսարանական եւ սկաուտական դասախօսական դրութիւնը, առաջինին համար մուտք նշանակելով մէկ ս. դահլեյան: Տրուած հաշիւներէն կը պարզուի, որ ամէն անգամուն 65-100 հոգի ներկայ եղած են: Սկաուտներու զգեստաւորումը դիւրացնելու մտօք կը հաստատուի իրենց յատուկ խնայողական սնտուկ: Օգոստոսին կը կազմակերպուի անդամական արշաւ, իսկ նոյն ամսուան արդէն պատրաստ են ութը սկաուտներ իրենց երդումը կատարելու, կը հաղորդուի Շրջանային վարչութեան: Վարչութիւնը կ'որոշէ Հոկտեմբերէն սկսեալ զիշերային դասընթացքի ձեռնարկել, ինչպէս նախորդ տարիներուն կը կատարուէր: Վարչութիւնը կ'որոշէ նաեւ կարճ թատերախաղերու ներկայացում տալ, ամէն ամիս, որպէս աղբիւր հասոյթի:

Շրջանային վարչութիւնը նամակ մը կը ստանայ Պաղեստինի Յոպպէ քաղաքին մէջ գոյութիւն ունեցող Հայ Սկաուտական Միութենէն: Շրջանային վարչութիւնը այս դիմումին կը պատասխանէ իր 29 Սեպտեմբերին 1930 թուակիրով.

«Շրջանային վարչութիւնս նկատի առաւ իր հովանաւորութիւնը խնդրող ձեր դիմումը. սկզբունքով համաձայն ըլլալով՝ սիրայօժար փափաքեցաւ ձեռք կարկառել ձեզ: Եւ սակայն, նախքան այդ, ուզեց ձեր նկատողութեան յանձնել.

«Ա. Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը պետական արտօնագրի հիմունքով, չի կրնար տարբեր անունի տակ գործող միութիւն մը հովանաւորել, ուստի այդ պարագային ձեր միութիւնը պէտք է ըլլայ Յոպպէի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներ:

«Բ. Սուրիոյ եւ Պաղեստինի հովանաւոր պետութիւնները տարբեր ըլլալուն, հաւանաբար դժուարութիւններ ունենանք վաւերացման, հետեւաբար աւելի լաւ կ'ընէք դիմելու Հ.Մ.Ը.Մ.ի Եգիպտոսի Շրջանային վարչութեան»:

Շրջանային վարչութիւնը 26 Հոկտեմբերին Պեյրուսի վարչութեան հետ կ'ունենայ խառն ժողով մը, ուր կը խօսուի ակումբ մը վարձելու եւ մարզիչ մը ունենալու մասին: Այս վերջինին համար յարմար կը տեսնուի հրաւիրել Համագասպ Փանոսեանը: Ժողովը կը զբաղի նաեւ պատգամաւորական ժողովի թուականով: Այս ժողովին կ'որոշուի Միմոն Թերճանեանը Դամասկոս ղրկել որպէս լիազօր ներկայացուցիչ:

Այս ժողովէն շաբաթ մը ետք կը վարձուի չորս սենեակներէ բաղկացած ակումբ մը Ս. Նշանի մօտերը: Ակումբը լաւագոյն կերպով օգտագործելու համար յանձնախումբ կը կազմուի Յովհաննէս Սերոբեանէ, Վահան Մջիկեանէ եւ Յարութիւն Պալքճեանէ:

Վարչութիւնը ներքին փոխառութեամբ միայն կարողացած էր ակումբը վարձել ու վճարել 20 օսմ. ոսկի, ուստի, հարկ էր այս բացը գոցել ակումբի բացման հանդէսով մը: Սակայն, հապճեպ պատրաստութեամբ հրապարակ ելած այս հանդէսը սպասուած արդիւնքը չի տար, ուստի, կ'որոշուի, ըստ Շրջանային վարչութեան մասնաճիւղերուն ղրկած շրջաբերական հրահանգին, Հ.Մ.Ը.Մ.ի 12-րդ տարեդարձին աթիւ կազմակերպել մտածուած ու պատրաստուած հանդէս մը՝ ապահովելու մտօք, նիւթական ու բարոյական շահ:

Շրջանային վարչութիւնը առանձին շրջաբերականով պատգամաւորական ժողովի կը հրաւիրէ մասնաճիւղերը:

Այնքան խաղաղ եւ բոլորանուէր ճիգերով ընթացող Թրիփոլի մասնաճիւղին ներքին կեանքին մէջ յառաջ կու գայ փոթորիկ մը Հոկտեմբեր 19-ին պատահած դէպքի մը հետեւանքով: Այս դէպքին քննութեան համար կազմուած դատական մարմինը, որուն կը մասնակցին Արիս Աթմաճեան, Յ. Պալեան, Յ. Ազրլըբան, Կ. Պոյաճեան, յետ քննութեան, Կիրակի, 26 Հոկտեմբեր 1930-ին, կ'արձանագրէ հետեւեալ վճիռը.

«Խոսրով Գարաճայեան, որ ստանձնած է որբի մը պաշտպանութիւնը 19 Հոկտեմբեր 1930-ի գիշերը, խմբապետին ու արիւններուն հետ կռուած է: Սխալ տեղեկութիւններով «Լիբանան» թերթի Շաբաթ, 25 Հոկտեմբերի թիւով ատենապետը, խմբապետը եւ արիւնները վարկաբեկած է վատ լեզուով, որով մենք ստորագրեալներս իբրեւ պատիժ կը վճարենք զայն Հ.Մ.Ը.Մ-ի շարքերէն եւ այս կ'իմացնենք տեղական եւ Շրջանային Վարչութեան»:

Խնդիրը ասով չի սահմանափակուիր, Ազգային վարժարանի սենեակներու հարցը, որոնք որպէս աղուժը կը գործածուէին, մէջտեղ կու գայ: Գարաճեանին կողմնակիցները կը գրգռուին: Բողոք եւ հակաբողոք կը տեղայ Շրջանային Վարչութեան, որ ստիպուած կ'ըլլայ ղրկելու Խորէն Սուքիասեանը որպէս լիազօր քննիչ:

Լիազօր քննիչին տեղեկագիրին վրայ, Շրջանային Վարչութիւնը «Ազգակ» օրաթերթի 16 Դեկտեմբեր 1930-ի թիւին մէջ կը յայտարարէ.




1945. սկաուտներ Անթիլիասի Մայր Տաճարին առջեւ:

«Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային Վարչութիւնը նկատի ունենալով Մինաս Արծրունիի ատենապետութեան տակ գտնուող Թրիփոլի տեղական վարչութեան անկարգապահական ընթացքը ու միութեանս ոգիին հակառակ ունեցած գործունէութիւնը, ցնոր տնօրինութիւն կը կախակալէ վարչութեան բոլոր անդամները»:

Պատկերէն 6 Դեկտեմբեր 1930 թուակիր նամակով մը կը տեղեկացուի մասնաճիւղի մը կազմութիւնը: Ուրախութեամբ ողջունելէ ետք, Շրջանային Վարչութիւնը կը

վաւերացնէ երեք հոգիներէ՝ Ստեփան Գրաճեանէ, Լեւոն Թերճանեանէ եւ Հրանդ Թորոսեանէ բաղկացած վարչութիւնը, կը թելադրէ որ շուտով գումարուի անդամական ընդհանուր ժողով ու վարչական կազմը լրացուի նոր անդամներով:

(Շար. 31)



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.

ՊԷՏՔ Է ՕՐԻՆԱԿԵԼԻ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐ ԸԼԼԱԼ, ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՆԴԱՄՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«ՄԱՐԶԻԿ» ԻՆ Կ' ԸՍԷ ՀԱԼԷՊԱՀԱՅ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ
Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲ. ՎԱՀԷ ՊՕՇԿԷԶԷՆԵԱՆ

**Հարցազրույցը վարեց՝ Րաֆֆի Սիւլահեան
ՀԱԼԷՊ**

**Կարելի է՞ մեզի ներկայացնել ձեր կենսագրականը եւ թէ՛
ի՞նչպէս մուտք գործած էք Հ.Մ.Ը.Մ.ի շարքեր:**

- Ծնած եմ Լիբանան, 1929 թուականին: Երկու տարեկա-
նիս, ծնողքիս հետ հաստատուած եմ Հալէպ, ուր յաճախած
եմ Ուսումնասիրաց վարժարանը: 1942 թուականին նետուե-
ցայ կեանքի ասպարէզ՝ ընտրելով ինքնաշարժներու նստա-
րաններու կահաւորման արհեստը: Մայրս Այնթապի մէջ
եղած էր ուսուցչուհի, եւ երբ ես ու եղբայրս դպրոցէն դադ-
րեցանք՝ մեզի թելադրեց, որ անդամակցինք միութեան մը,
ըսելով թէ՛ ակումբը երկրորդ դպրոց մըն է: 1943-ին, հան-
գուցեալ ընկերոջս՝ Վարդան Ալապողանեանի երաշխաւորու-
թեամբ մաս կազմեցի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն,
իսկ եղբայրս անդամակցեցաւ «Վասպուրական» միութեան:
Միութենական երկար գործունէութենէ ետք՝ պարզեւատրու-
ած եմ Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանով:

**Կարելի՞ է ամփոփ տեղեկութիւններ փոխանցել Հ.Մ.-
Ը.Մ.ական ձեր կեանքին մասին:**

- 1944 թուականին, երբ ներգաղթը սկսաւ, մեր խումբը,
որ մօտաւոր 40 եղբայրներէ կը բաղկանար, նուազեցաւ եւ



մնաց եօթը անդամ: Այդ
չրջանին մեր խումբի պա-
տասխանատուն էր եղբ. Լե-
ւոն Մերձանեանը: Յաջորդա-
բար պատասխանատուներս
եղած են եղբայրներ Հայրա-
պետ Նաճարեանը եւ Սարգիս
Ճապաղջուրեանը: Այդ շրջա-
նին Լիբանանի մէջ տեղի ու-
նեցաւ միջ-մասնաճիւղային
ողիմպիական մրցաշարք մը:
Մեծ թիւով եղբայրներ, որ-
պէս երէց սկաուտներ,
սկաուտական տարազով
մարզական խումբերուն կող-
քին մասնակցեցան այդ մրցումներուն: Կը յիշեմ, մեր ճամ-
բորդած օրը մահացաւ Հալէպի նշանաւոր դէմքերէն Սաա-
տալլա Ժապիրին, որուն թաղման արարողութեան ներկայ
գտնուեցան խումբ մը Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներ:



Որո՞նք կը յիշէք այդ շրջանի պատասխանատուներէն:

- Այդ շրջանը ունեցաւ բաւական վաստակաւոր եւ ծառա-
յասէր եղբայրներ, որոնք մեզի սորվեցուցին հաւատարմու-
թիւն, ծառայութիւն եւ ազգասիրութիւն: Անոնցմէ կրնամ
յիշել եղբայրներ Լուտեր Մասպանաճեանը, Յարութիւն Տէր-
վիշեանը, Եղուարդ Ճէմճէմեանը, Յարութիւն Բարսեղեանը,
Գրիգոր Անտոնեանը եւ շատեր, որոնք բոլորը եղան մեր իտէ-
ալները:

**Որպէս տարազաւոր դադրելէ ետք՝ վարչական ի՞նչ պաշ-
տօններ վարած էք:**

- Մինչեւ 1953 թուական եղած եմ տարազաւոր սկաուտ:
Շրջան մը հեռու մնացի Հ.Մ.Ը.Մ.ի կազմերէն, բայց վարեցի
միութենական տարբեր աշխատանքներ: 1963 թուականին
նշանակուեցայ Հ.Մ.Ը.Մ.ի վարչական: Մեր ատենապետն էր
եղբ. Ժողէֆ Պայրամեանը, վարչական էին եղբայրներ Տիգ-
րան Զափանեանը, Ժանօ Ղազարեանը, Պարգեւ Այվազեանը:
Երկու տարի ետք դարձեալ ընտրուեցայ Հ.Մ.Ը.Մ.ի վարչա-
կան, եղբ. Լեւոն Էսմէրեանի ատենապետութեամբ:

Այդ վարչութեան մէջ էին Քառէն Եփփէ Ազգ. Ճեմարանի

հանգուցեայ տնօրէն Անդրանիկ Խաչատուրեանը, եղբայրներ Սարգիս Խուրշուտեանը, Յովհաննէս Պասմաճեանը եւ Սուրէն Նազարեանը: Որպէս վարչական ստանձնած էի գանձապահի պաշտօնը: 1977 թուականին վարեցի վարչութեան ատենապետի պաշտօնը: Սուրիոյ ակումբներու միացման շրջանին, մենք տասնեակ մը նամակներ յղեցինք Սուրիոյ մարզական ֆետերասիոնին, պահանջելով որ Հ.Մ.Ը.Մ-ը չկցուի այլ ակումբներու: Ֆետերասիոնը ընդառաջելով մեր առաջարկին, մեզ պահեց որպէս անջատ միութիւն, եւ պետութեան կողմէ «ՍՈՒՐԻ» անունը եղաւ «ԵԱՐՄՈՒՔ»: Քանի մեր մարզիկներուն մեծամասնութիւնը դպրոցականներ էին՝ աշխատանք տարի, որ պարոն Արբաճամ Քէչիշեանը ստանձնէ Քառէն Եփփէ Ազգ. Ճեմարանի մարզանքի ուսուցիչի պաշտօնը: Միեւնոյն ժամանակ ան մարզեց Հ.Մ.Ը.Մ-ի խումբերը:



Ո՞ր բանակումն է, որ յատուկ տպաւորութիւն ձգած է ձեր վրայ:

- Հայկալի «Շամփանիա» դաշտին մէջ տեղի ունեցաւ Սուրիոյ վաշտերու բանակումը, որուն ներկայ գտնուեցաւ լորտ Պէյրտըն Փաուըրի օգնականը, որ դարձեալ սկաուտապետ էր: Այդ բանակումին մասնակցեցան խումբ մը Հ.Մ.Ը.Մ-ականներ, որոնք մարզուած էին լաւագոյն կերպով: Եղբայրներուն բարձրացուցած աշտարակը մեծ գոհունակութիւն պատճառեց սկաուտապետին, եւ ան գնահատեց մեր բոլորին աշխատանքը:

Կրնա՞ք յիշել յատկանշական դէպք մը, որ անջնջելի կը մընայ ձեր տպաւորութեան մէջ:

- 1959 թուականին, մեր «Նաւասարդեան» դաշտը, որուն հիւսիսային բաժինը հողատարածք մը կար, ուզեցինք վերածել ընտանեկան պարտէզի:

Այդ շրջանի վարչականներէն եղբ. Նշան Թիւյիւզեանին ներկայացուցինք մեր առաջարկը: Նիւթական դժուար պայմաններու մէջ մենք յաջողեցանք պատրաստել կոկիկ պարտէզ մը, ուր ամէն օր կը համախմբուէին Հ.Մ.Ը.Մ-ի համակիրները: Ապահովեցինք պարտէզին ելեկտրականութիւնը, աթոռները, սեղանները եւ կարողացանք նիւթական եկամուտի աղբիւր մը ունենալ:

Հ.Մ.Ը.Մ-ի կողքին ազգային ի՞նչ պարտականութիւններ ստանձնած էք:

- Աւելի քան քսան տարի եղած եմ Ազգ. Սահակեան վարժարանի հոգաբարձութեան անդամ: Եղած եմ Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղականութեան անդամ՝ կառուցուած շրջանէն մինչեւ 22 տարի: Դարձած եմ նաեւ

տնտեսական եւ գաւառական ժողովներու անդամ: Պարզեւատրուած եմ Բերիոյ Թեմի Առաջնորդ Սուրէն Արք. Գաթարոյեանի ձեռամբ՝ ազգային մարմիններու շուրջ քառասուն տարիներու ծառայութեանս համար: Պարզեւատրուած եմ նաեւ Ազգ. Սահակեան վարժարանին կողմէ:

Ի՞նչ տարբերութիւն կը գտնէք անցեալի եւ ներկայի սերունդներուն միջեւ: Նաեւ՝ ի՞նչ պատգամ կ'ուղղէք Հ.Մ.Ը.Մ-ի այսօրուան սերունդին:

- Մեր սերունդին մօտ կար զոհողութեան ոգին: Կը ծառայէինք առանց նիւթական ակնկալութեան: Մարզիկները իրենք կ'ապահովէին իրենց տարազներն ու մարզական կօշիկները: Ներկայիս այս մէկը նուազած կը տեսնեմ մեր անդամներուն մօտ: Յարգանքս բոլորին, սակայն ոմանք եղած են նիւթապաշտ: Ներկայ պատասխանատու կազմին պարտաւորութիւնն է պատրաստել միութենական գիտակից անդամներ, որովհետեւ պատանիին կամ երիտասարդին տիպար օրինակն է իր պատասխանատուն: Պէտք է օրինակելի միութենականներ ըլլալ, օրինակելի անդամներ պատրաստելու համար:

Եղբ. Պարգեւ, ի՞նչպէս կ'ուզէք եզրափակել ձեր խօսքը:

- Հ.Մ.Ը.Մ-ը երկրորդ դպրոց մըն է: Նոր սերունդէն խնդրանքս է, որ ըլլան անաչառ ծառայողները այս միութեան, որ աւելի քան 94 տարի պատրաստեց ազգային դէմքեր: Թող աթոռապաշտներ չըլլան, այլ՝ ըլլան նոր սերունդը պատրաստելու կամուրջ: Իրենց գործունէութիւնները ըլլան կանոնադրութեան համաձայն: Պատասխանատու մը, որ հրահանգը պիտի փոխանցէ, նախ ինքն է որ պիտի իրագործէ գայն: Մէկ խօսքով՝ եթէ կ'ուզես առաջնորդ ըլլալ՝ պէտք է գիտնաս կամուրջ ըլլալ:



ՄՊԱՆԻՈՅ ՔԼԱՍԻՔՈՆ



Գեորգ Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

Ակնյալ է, որ սպանական ֆուտպոլը վերջին տարիներուն կ'ապրի իր «Ոսկեդարը»: Ազգային խումբը վերջին երկու միջազգային մրցաշարքերուն՝ Եւրո 2008-ին եւ 2010-ի Մոնտիալին դարձաւ ախոյեան: Սպանական ակումբները անգսպելի դարձած են եւրոպական մրցաշարքերուն, իսկ Սպանիոյ ախոյեանութիւնը կը նկատուի ամէնէն հետաքրքրական ախոյեանութիւններէն մէկը:

Սպանիոյ ախոյեանութեան մեծագոյն ակումբները արքայական Ռէալ Մատրիտն ու Բարսելոնան են: Այս երկու ակումբները միասնաբար տիրացած են շուրջ 50 ախոյեանութեան, շուրջ 45 անգամ տիրացած են Սպանիոյ բաժակին եւ եւրոպական գետնի վրայ արժանացած են բազմաթիւ տիտղոսներու:

Սակայն, այս երկու «հսկաներուն» միջեւ տեղի ունեցող մրցումները տարբեր «համ ու հոտ» ունին: Անկախ այն իրողութենէն, որ անոնք Սպանիոյ ախոյեանութեան բոլոր ժամանակներու ամէնէն յաջող ու հզօր կազմերն են, կան նաեւ ենթակայական ու քաղաքական դրդապատճառներ, որոնք դրսեւորումը կը կատարուի ֆուտպոլի դաշտերուն վրայ:



Ռէալ Մատրիտ մայրաքաղաքի կազմը ըլլալով՝ ան նաեւ անուղղակիօրէն կը վայելէ արքայական ընտանիքին բարոյական նեցուկն ու հովանաւորութիւնը: Իսկ Պարսա կը հանդիսանայ անջատողական տրամադրութիւններով լեցուած քաթալաններու խորհրդանիշը: Ահաւասիկ, այս երկու ակումբներուն միջեւ կատարուած մրցումները կը հասնին բաւական «տաք» վիճակի եւ երբեմն թատերաբեմ կը հանդիսանան ոչ-մարզավայել երեւոյթներու:

Նախ նայինք թէ պատմութիւնը ինչ կ'ըսէ քլասիքոյին մասին:

Յարդ կատարուած են 249 մրցումներ: Ռէալ յաղթական դուրս եկած է 90 անգամ, Պարսա՝ 104 անգամ եւ 55 մրցում աւարտած է հաւասարութեամբ: Ռէալ նշանակած է 404 կոլ, իսկ Պարսա՝ 432 կոլ: Այս մրցումները կատարուած են բոլոր մրցաշարքերու ընթացքին՝ Սպանիոյ ախոյեանութիւն, ըՍպանիոյ Բաժակ, Սպանիոյ լիկայի բաժակ (ներկայիս ջնջուած), եւրոպական մրցաշարքեր, միջազգային թէ տեղական այլ մրցաշարքեր եւ բարեկամական մրցումներ: Առաջին մրցումը կատարուած է 13 Մայիս 1902-ին, Մատրիտի մէջ, Քորասիոնի անլան բաժակի կիսաւարտականին եւ աւարտած է Պարսայի յաղթանակով, 3-1 արդիւնքով: Ախոյեանութեան առաջին մրցումը կատարուած է 17 Փետրուար 1929-ին, Պարսելոնայի մէջ եւ Ռէալ յաղթած է 2-1 արդիւնքով, իսկ բաժակի առաջին մրցումը կատարուած է Պարսելոնայի մէջ եւ տեղւոյն

կազմը յաղթած է 2-1 արդիւնքով: Ռէալ ամենամեծ արդիւնքով յաղթանակը արձանագրած է 1943-ին, Սպանիոյ բաժակի կիսաւարտականին՝ 11-1 արդիւնքով, իսկ Պարսա՝ 1913-ին բարեկամական մրցումի մը ընթացքին, 7-0 արդիւնքով յաղթած է Ռէալի: Քլասիքոյի ցարդ կողմերըն է Մատրիտի բոլոր ժամանակներու մեծագոյն Ֆուլթպոլիստներէն Տի Սթեֆանո: Ան քլասիքոյի մրցումներուն ընթացքին նշանակած է 18 կոլ: Սակայն, Պարսայի ներկայի կազմէն առասպելական Լիոնէլ Մեսսի նշանակած է 13 կոլ: Մեսսի բոլոր տրեւելները ունի բարելաւելու Տի Սթեֆանոյի մրցանիչը:

Պարսելոնայէն Ռէալ Մատրիտ փոխանցուած են 21 Ֆուլթպոլիստներ, իսկ Ռէալէն Պարսա փոխանցուած են 12 Ֆուլթպոլիստներ:

Սպանական Ֆուլթպոլի վերելքին հետ, քլասիքոյի նկատմամբ հետաքրքրութիւնը բնականաբար աճեցաւ: Այսօր քլասիքոն կը հանդիսանայ Չէմփիրնզ լիկի աւարտականէն ետք ամէնէն շատ ակնդիր ունեցող մրցումը: 2002-ին, Չէմփիրնզ լիկի կիսաւարտականին անոնց միջեւ կատարուած մրցումին հետեւած է կէս միլիառ մարդ:

Վերջին տարիներուն, քլասիքոյին վրայ լուսարձակներ կեդրոնանալու այլ պատճառներ ալ կան: Անկախ երկու կազմերուն «թշնամանք»էն, հոն կան զանազան մրցակցութիւններ: Քրիսթիանո Ռոնալտո-Լիոնէլ Մեսսի պայքարը, Մորինիո-Կուարտիլոյ մրցակցութիւնը յաւելեալ եռանդ ստեղծած են քլասիքոյին շուրջ: Մարզիչ Կուարտիլոյի ժամանումէն ետք, Պարսա դարձած է գերհզօր խումբ մը եւ քլասիքոներուն նժարը թեքած է դէպի Պարսա: Աշխարհի լաւագոյն Ֆուլթպոլիստը՝ Մեսսի միշտ ալ քլասիքոներուն իր խօսքը ունի ըսելիք, մինչ Ռոնալտո յաճախ շուքի մէջ կը մնայ: Այս տարեշրջանին անոնք հանդիպած են հինգ անգամ: Պարսա յաղթական դուրս եկած է երեք անգամ, իսկ երկու մրցում աւարտած է հաւասարութեամբ: Սպանիոյ ախոյեանութիւնը, որ մտած է հետաքրքրական եւ վճռական հանգրուան, շատ հաւանական է որ ախոյեանը ճշդուի Ապրիլին, Քամփ Նուի մէջ կայանալիք քլասիքոյի արդիւնքին լոյսին տակ: Շատ հաւանական է նաեւ, որ անոնք իրարու հանդիպին նաեւ Չէմփիրնզ լիկի աւարտականին:

Պարսելոնա իր խմբային գեղեցիկ ու հմայիչ խաղով կը մընայ անգոսպելի: Չաւի-Ինիեսթա-Մեսսի եռեակը անոր յաջողութեան գրաւականն է: Որեւէ մրցումի Պարսա եթէ ամբողջական կազմով դաշտ ներկայանայ, ապա մրցակից կազմին



պարտութիւնը գրեթէ անխուսափելի է: Մինչ Ռէալի ուժականութիւնը յենած է կոլեր նշանակող վարպետներու՝ Ռոնալտոյի, Պենզիմայի եւ Հիկուէնի եւ ամուր պաշտպանողականին վրայ: Ան չունի դաշտին կեդրոնը տիրապետող միջնապահ գիծ, ու վերջին տարիներուն քլասիքոներուն Պարսայի յաջողութեան գաղտնիքը պէտք է փնտռել այս կէտին մէջ: Կուարտիլոյ յաջողած է ստեղծել միջնապահ գիծ մը, որ իր արդիւնաւէտութեամբ աշխարհի լաւագոյններէն է, եթէ ոչ լաւագոյնը:

Մէկ բան յստակ է, որ անոնց միջեւ կատարուած մրցումները միշտ ալ տաք, բարձր մակարդակի, երբեմն «ելեկտրականացած» մթնոլորտի մէջ տեղի կ'ունենան, ու յաճախ կ'աւարտին կոլառատ արդիւնքներով: Երկու կազմերու ծայրայեղ համակիրներուն համար այս մրցումներուն արդիւնքները շատ աւելի կարեւոր են՝ քան ամբողջ մրցաշարք մը: Անոնք նոյնիսկ համաձայն են կորսնցնելու Սպանիոյ ախոյեանութիւնը կամ այլ մրցաշարք մը, բայց կարեւորը յաղթական դուրս գան քլասիքոյէն:

Վերջապէս, այս երկու կազմերուն պատկերը մեզի կը յուշէ, թէ յառաջիկայ տարիներուն քլասիքոն պիտի շարունակէ մնալ հետաքրքրական ու բարձր մակարդակի եւ այս երկու ակումբները միասնաբար պիտի տիրապետեն Սպանիոյ ախոյեանութեան եւ Եւրոպայի մէջ դժուար թէ տեղի տան այլ կազմերու դիմաց:





ՇԱՐԺԱՅՈՒՄ ԱՆՅԿԱՅՈՒԵՅ 5-ՐԴ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՀԱԲԱՔԸ

Թղթակից
ԵՐԵՒԱՆ



ՀՄԸՄ-ՀԱՍԿ-ի «Երեւան» միաւորի անդամ եղբայրերտ Թադեւոսեանը Փետրուարի 4-14-ին ԱՄԷ-ի Շարժա քաղաքում մասնակցել է «Սկաուտութիւնը եւ յատուկ կարիքներ ունեցող երիտասարդների համարկումը հասարակութեանը» խորագրով 5-րդ սկաուտական հաւաքին: Միջազգային հաւաքին իրենց մասնակցութիւնն են բերել 79 սկաուտներ 38 երկրներից:

Միջոցառման ծրագրում ներառուած են եղել սկաուտական կազմակերպութիւնների փորձի փոխանակում, առաջին օգնութեան դասընթացքներ, այցելութիւններ ԱՄԷ-ի պետական համալսարան եւ Շարժաի յատուկ կարիք ունեցող երեխաների գիշերօթիկ դպրոց: Միջոցառման ընթացքում յիշարժան է եղել հաւաքին Ֆինանսական աջակցող ԱՄԷ-ի Շէյխ Սուլթան Պին Մոհամմէտ Ալ Քասիմիի այցելութիւնը,

ով հանդէս է եկել ողջոյնի խօսքով: Ծրագրի ընթացքում մշակուել են հասարակութեան մէջ յատուկ կարիք ունեցող երիտասարդների համարկման ծրագրեր, որոնք մասնակիցները պէտք է իրականացնեն իրենց երկրներում:

Տեղի են ունեցել նաեւ մշակութային տարբեր միջոցառումներ, որոնցից նշանակալին ազգային երեկոյի անցկացումն է եղել: Սրա ընթացքում պատուիրակները ծանօթացել են մասնակից երկրների մշակոյթի, ուտեստների, երգերի, պարերի ու սովորութիւնների հետ: Հայաստանի ներկայացուցիչը ներկաներին սովորեցրել է ազգային Մշու խրո պարը եւ հիւրասիրել ազգային կերակրատեսակներով:

Հաւաքին ակտիվ մասնակցութեան համար Ալբերտ Թադեւոսեանն արժանացել է յուշամետալի:

ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԱՐՇԱԲ ԴԷՊԻ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

Թղթակից
ԵՐԵՒԱՆ



Փետրուարի 5-ին, Երեւան միաւորի խմբապետական կազմի ջանքերով կազմակերպուեց ճանաչողական արշաւ, որի ժամանակ սկաուտներն ու երէցները այցելեցին Արագած լեռան արեւելեան լանջին գտնուող (Արտաշաւան գիւղի մօտակայք) հայոց այբուբենի յուշարձան, Սաղմոսավանք, Օհանավանք եւ Մուղնիի միջնադարեան եկեղեցիներ:

Չնայած ցուրտ եղանակին՝ սկաուտները ոտքով հասան Սաղմոսավանք, ծանօթացան վանական համալիրի ըստեղծման պատմութեանը:

Երեւան վերադառնալով՝ կենտրոնական գրասենեակում սկաուտներից ոմանք ստացան առաջնորդի եւ փոխառաջնորդի աստիճաններ:

www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org
www.homenetmen.org
www.homenetmen.org
www.homenetmen.org

2 012 թ. Մարտի 2-4-ին Ադալնա-ձորում տեղի ունեցավ Հ.Մ.-Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի սկսողական Ա. կարգի դպրոց-բանակում, որին իրենց մասնակցությունը բերեցին կազմակերպությունների 39 անդամներ՝ բոլոր միալորներին:

Ծրագիրն իրենից ներկայացնում էր խմբակների եւ խմբերի պատասխանատուների ու առաջնորդների որակաւորման բարձրացման տեսա-գործնական դասընթացը: Դպրոց-բանակումը մասնակիցներին հնարաւորութիւն տուեց իրենց տեսական գիտելիքներն ու գործ-

Ա. ԿԱՐԳԻ ԴՊՐՈՑ-ԲԱՆԱԿՈՒՄ

նական հմտութիւնները զարգացնելով՝ վերադառնալ մասնաճիւղեր եւ ինքնուրոյն մշակել ու իրականացնել միալորային գործունէութիւն:

Բացի սկսողականից, ներկայացւեցին նաեւ ազգային բնոյթի թեմաներ՝ հրաւիրուած դասախօսների միջոցով:

Նոյն խանդավառութեամբ ու ակտիվութեամբ անցան նաեւ տեսական ու

գործնական աշխատանքներից յետոյ իրականացուող երեկոյեան ժամանցային ծրագրերը:

Եւօրեայ աշխատանքից յետոյ, մասնակիցները վերադարձան միալորներ՝ նոր գաղափարներ ու ծրագրեր իրագործելու վճռականութեամբ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ ՊՈՒՏԱՓԵՇՏՈՒՄ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

2 012 թուականի Փետրուարի 20-26-ին Հունգարիայում՝ Պուտափեշտի Եւրոպական երիտասարդական կենտրոնում տեղի ունեցավ ուսումնական սեմինար՝ «Փոխել իրավիճակը. երիտասարդների իրաւունքների շահերի պաշտպանութիւն» («Shape the change: Advocacy for Youth Rights») թեմայով, որին մասնակցում էին Համաշխարհային Սկսողական Շարժման Եւրոպա եւ Եւրասիա սկսողական տարածաշրջանների ազգային կազմակերպութիւններից հրաւիրուած երիտասարդ անդամներ: Հայաստանի ազգային սկսողական շարժումը ներկայացրել են երկու մասնակից՝ եղբ. Հայկ Կարապետեանը «Երեւան» միալորից եւ քոյր Սաթենիկ Դաւթեանը Արմաւիրի «Վ. Բախշեան» միալորից:

Սեմինարի ընթացքում համակարգող թիմի կողմից (Մարիանա Ֆրաքիօ, Սապինէ Քլոկեր, Ալեքս Մասսոն եւ Ճորտըն Պայրաքտարօ) ներկայացրել են մի շարք դասախօսութիւններ, որոնք հիմնականում երիտասարդների իրաւունքների, կազմակերպութեան շահերի պաշտպանութեան, դրան ուղղուած միասնական ռազմավարութեան մշակման ու դրա իրագործման, ինչպէս նաեւ ստացուած գիտելիքները ազգային ըսկսողական կազմակերպութիւնների շահերի համար օգտագործելու ուղղութիւնների մասին են եղել:

Կազմակերպուել են նաեւ իրավիճակային խա-

ղեր եւ գիտելիքների գործնական կիրառման վարժութիւններ: Ուսումնական ողջ գործընթացը վարուել է ոչ-ֆորմալ կրթական մեթոդներով:

Կարեւոր իրադարձութիւն է եղել նաեւ միջազգային երեկոն, որի ընթացքում բոլոր մասնակիցները հակիրճ ներկայացրել են իրենց մշակոյթը, արուեստն ու պատմութիւնը: Երեկոյի համար Հայաստանի ներկայացուցիչները, բացի ազգային խորհրդանիշները, Հայաստանի ու կազմակերպութեան մասին պատմող գրականութիւնը, ազգային խոհանոցը ներկայացնելուց, ցուցադրել են փոքրիկ տեսահոյովակ, որը ներկայացրել է հայ մշակոյթն ու արուեստը: Ամէն ինչ բաւականին յաջող է ներկայացուել, որի վկայութիւնն են եղել գովասանքի խօսքերը՝ ստացուած միւս մասնակիցներից եւ համակարգող թիմի անդամներից:

Մասնակիցներին նաեւ հնարաւորութիւն է տրուել այցելել Պուտափեշտի տեսարժան վայրեր (Ս. Սթեֆանի հրապարակ, Մաթիասի եկեղեցի, Հերոսների հրապարակ, Բուդա պալատ), իսկ ազգային ռեստորաններից մէկում կազմակերպուած ընթրիքին՝ ծանօթանալ հունգարական խոհանոցին:

Ծրագիրը բոլոր մասնակիցների կողմից կարեւորուել է իր բովանդակութեամբ ու հետաքրքրութեամբ: Բացառիկ այս օրերը, ընկերական ու գործնական յարաբերութիւնների

հաստատումը ընդմիջտ կը յիշուեն, իսկ ձեռք բերուած գիտելիքներն ու փորձը կը ծառայեն ազգային կազմակերպութիւնների առաջնադասմանը:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ Գ-ՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԷՋ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

ՀՄԸՄ-ի հիւսիսային Ամերիկայի երեք շրջաններուն համար գեղեցիկ սովորութիւն դարձած է տարեկան շրջանային պատասխանատուներու մակարդակի հանդիպումներ կատարել՝ մօտէն ծանօթանալու համար իրարու գործունէութեան եւ նորութիւններ փոխանցելու համար մարզական եւ յատկապէս սկաուտական աշխատանքներու մասին:

Այս տարի ակնարկուած հանդիպման Գ-րդն էր, որ տեղի ունեցաւ 17-19 Փետրուար 2012-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու կեդրոնին մէջ, Շրջանային Վարչութեան հիւրընկալութեամբ: Ժողովին պաշտօնական բացումը կատարուեցաւ Ուրբաթ, 17 Փետրուարի երեկոյեան ժամը 6:30-ին: Ներկաները ողջունեց հիւրընկալ շրջանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեան, որ կազմակերպուած հանդիպումին կարեւորութիւնը ընդգծելէ ետք, ժողովը բացուած յայտարարեց եւ ժողովականներուն ծանօթացման առիթը ընծայեց: Այսպէս-

Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի Շրջանային Վարչութենէն հանդիպումին մասնակցեցան եղբայրներ Լեւոն Պէնկեան (ատենապետ), Տիրան Շահինեան (քարտուղար), Հրայր Շահինեան (գանձապահ) եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդի ատենապետ եղբ. Գառնիկ Նազարէթեան:

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութենէն՝ եղբայր Յովիկ Արզարեան (ատենապետ), քոյրեր Էլիզապէթ Տրամկոչեան (քարտուղար) եւ Արշօ Գասպարեան (գանձապահ): Վերջինը շրջանի սկաուտ խմբապետներէն Սմբատ Տրամկոչեանի ընկերակցութեամբ մասնակցեցաւ սկաուտական ժողովին:

Իսկ Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան



Մ. Նահանգներու Շրջանային Վարչութենէն՝ եղբայրներ Գառնիկ Աբրահամեան (ատենապետ), Փիէր Մանուկեան (փոխ ատենապետ), Բաֆֆի Յնծալեան (քարտուղար) եւ Շրջանային Ընդհ. Խմբապետուհի քոյր Թալին Հինտոյեան: Շրջանային փոխ խմբապետուհի քոյր Նայիրի Մանուկեան մասամբ մասնակցեցաւ ժողովներուն:

Հանդիպումներուն մասնակցեցաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեան, որ ժողովականներուն բարի գալուստ մաղթելէ ետք, առաջին հերթին շնորհաւորեց ժողովականները, որոնք Հ.Մ.Ը.Մ-ականի հաւատքով իրենց թանկագին ժամանակը տրամադրած եւ ներկայացած են ժողովին: Ապա, Հ.Մ.Ը.Մ-էն ներս համագործակցութեան հրամայականը ընդգծելով, եղբայրը շեշտեց անհրաժեշտութիւնը նման հանդիպումներու, որոնք մեծ ոգեւորութիւն կը ստեղծեն եւ կ'աշխուժացնեն միասնական աշխատանքը շրջաններու միջեւ:

Շարունակելով, եղբ. Դաւթեան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին կողմէ ռազմավարական ծրագրումի որդեգրման գործընթացին եւ վստահեցուց, որ ան կը նպատակադրէ Հ.Մ.Ը.Մ-ը առաջնորդել ղէպի բարձունքներ,



որպեսզի ո՛չ միայն հայ համայնքի հպարտանքը հանդիսանայ, այլև՝ երիտասարդութիւնը աւելի եւս ներգրաւելով իր շարքերուն մէջ, հանդիսանայ անոնց երկրորդ տունը:

Այնուհետեւ, ժողովը ընտրեց իր ղեկանը՝ եղբ. Գառնիկ Աբրահամեան՝ ատենապետ, եղբ. Բաֆֆի Յնծայեան՝ քարտուղար: Ընթերցուեցաւ նախորդ միջ-դիւանական ժողովին ատենագրութիւնը, որուն վաւերացումէն ետք, ժողովը կանգ առաւ եւ շարունակուեցաւ յաջորդ օրը՝ Շաբաթ, 18 Փետրուարի առաւօտեան:

Առաջին օրակարգով, երեք շրջաններու ներկայացուցիչները առանձնաբար ներկայացուցին իրենց շրջաններու ընդհանուր, մարզական եւ սկաուտական գործունէութեան ամփոփ տեղեկութիւնները եւ պատասխանեցին լուսաբանական հարցումներու:

Ապա, երեք շրջաններու սկաուտ ղեկավարները առանձնացան եւ իրենց սկաուտական աշխատանքներու քննարկման նուիրուած իրենց առանձին ժողովը գումարեցին: Սկաուտական այս ժողովը վարեց հիւրընկալ շրջանի Շրջանային Ընդհանրապետուհի քոյր Թային Հինտոյեան:

Զոյգ ժողովներու մասնակիցները զբաղեցան երեք շրջանները յուզող ընդհանրական մտահոգութիւններով եւ անոնց համապատասխան լուծումներ գտնելու ջանքերով:

Բժախնդրութեամբ քննուեցաւ Սփիւռք-Հայաստան քոյր մասնաճիւղերու դրութիւնը: Նկատի ունենալով անոր ունեցած օգտակար արդիւնքները, ժողովականները անհրաժեշտ գտան ծրագիրը քաջալերել եւ աւելի թափ տալ անոր զարգացման ընթացքին:

Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեան յատուկ օրակարգով մը գեկուցեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ռազմավարական ծրագիրին մասին, լայն բացատրութիւններ տալով անոր ստեղծման եւ գործադրութեան հանգրուաններուն մասին: Իսկ անոր հետեւելու կարելորութիւնը շեշտելով, եղբ. Դաւթեան յայտնեց, որ այս ծրագիրով կարելիութիւնը պիտի ստեղծուի քայլ պահել ժամանակին հետ, որպէսզի երիտասարդութիւնը ընդգրկուի միութեան շարքերուն մէջ եւ ստանձնէ անոր ղեկավարութիւնը:

«Ռազմավարական ծրագիրի կէտերուն մեծամասնութիւնը հիմնուած է մեր երիտասարդներու ուժերէն օգտուելու, արդիական եւ նոր աշխատանքներ մէջտեղ բերելու ջանքին վրայ: Յոյսով ենք, որ կը յաջողինք մեր միութիւնը 10-20 տարի ետք հասցնել այն կէտին, որ ան ըլլայ յառաջատար միջազգային կազմակերպութիւն մը», եզրափակեց եղբ. Դաւթեան:

Ռազմավարական ծրագիրի ներկայացումէն ետք, ժողովը



վականները այցելեցին Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյլի «Արարատ» եւ Լոս Անճելըսի մասնաճիւղերու կեդրոնները եւ մօտէն ծանօթացան զոյգ մասնաճիւղերու գործունէութեան:

Հաճելի այս այցելութիւններէն ետք, ժողովականները վերադարձան կեդրոն եւ ամբողջացուցին ժողովի մնացեալ օրակարգը: Բոլորն ալ մեծապէս օգտակար գտան Համահ.Մ.Ը.Մ-ական սկաուտական բանակումներն ու

մարզախաղերը, որոնք սփիւռքահայ Հ.Մ.Ը.Մ-ականը կը կապեն Հայրենիքին եւ անոր մէջ կը զօրացնեն ազգային ոգին: Շեշտը դրուեցաւ առողջ ղեկավարութիւն պատրաստելու հրամայականին վրայ եւ յատկապէս՝ Հ.Մ.Ը.Մ-ի հոգածութեան յանձնուած նորահաս սերունդներու ազգային դաստիարակութեան, միացեալ աշխատանքներու կազմակերպման, փոխադարձ այցելութիւններու եւ համացանցի միջոցով հարդակցելու կարելորութեան վրայ:

Սկաուտական գետնի վրայ, նկատի ունենալով, որ երեք շրջաններն ալ սկաուտական իրենց ընդհանուր բանակումները պիտի կազմակերպեն Յուլիս-Օգոստոս 2013-ին, առաջարկուեցաւ կարելիութեան սահմաններուն մէջ, ջանք թափել փոխադարձ մասնակցութիւն բերելու ակնարկուած բանակումներուն, որպէսզի գէթ գործնական գիտելիքներ փոխանակուին շրջաններու միջեւ: Այս իմաստով, քաջալերելի նկատուեցաւ յառաջիկայ քառամեակին, երեք շրջաններուն համար կազմակերպել միջ-ցամաքամասային բանակում կամ դաստիարակչական ծրագիրներ:

Միջ-շրջանային երկօրեայ այս հանդիպումը վերջ գտաւ երեկոյեան ժամը 6-ին: Այնուհետեւ, ժողովականները հիւրընկալ շրջանին կողմէ հրաւիրուեցան խրախճանք-ընթրիքի մը, շրջանի «Փինիշիա» ճաշարանը, ուր աւելի ծանօթացան իրարու եւ հաճելի երեկոյ մը անցուցին միասնաբար:

Կիրակի, 19 Փետրուարին, երեք շրջաններու ներկայացուցիչները մեկնեցան Սան Տիէկօ եւ ներկայ գտնուեցան տեղւոյն «Սեւան» մասնաճիւղի կազմակերպած պասքեթպոլի եւ վոլիպոլի միջ-մասնաճիւղային մրցումներուն: Այս առիթով, անոնք հանդիպում մըն ալ ունեցան մասնաճիւղի վարչութեան հետ, ծանօթացան անոր գործունէութեան եւ կազմակերպած մարզախաղերու մանրամասնութիւններուն: Նոյն օրը, երեկոյեան, անոնք ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի երէցական բաժանմունքի երգչախումբի երեկոյին եւ վայելեցին անոր հրամցուեցած ազգային-յեղափոխական երգերու գեղեցիկ ելոյթը:

Երկուշաբթի, 20 Փետրուարին, ժողովականները գեղեցիկ յուշերով մեկնեցան իրենց երկիրները, համագործակցութեան ոգին վառ պահելու համոզումով:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԱՆ ՏԻԷԿՈՅԻ «ՍԵԼԱՆ» ՄԱՍՆԱԾԻԲՂԻՆ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻԲԱՅԻՆ 27-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

Մարտ Բեչիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

ՀՄԸՄ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանին համար «Նախագահներու օր»ուան նուիրուած երկար շաբաթավերջը միշտ վերապահուած է Սան Տիէկոյի «Սելան» մասնաճիւղին, որ այդ օրերուն կը կազմակերպէ տարեկան իր միջ-մասնաճիւղային մարզախաղերը՝ մեծ ոգեւորութիւն ստեղծելով Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին եւ տեղւոյն հայկական գաղութին մէջ:

Բարձր դասակարգերու համար կազմակերպուած այս մարզախաղերը յաջողութեամբ իրագործուեցան 18, 19 եւ 20 Փետրուար 2012-ին, «էլիւրնթ Ինթըրնէշնըլ» համալսարանի վեց մարզադաշտերուն վրայ: Մասնաճիւղը, գործակցաբար Շրջանային մարզական խորհուրդին, կարողացած էր բծախնդրութեամբ կազմակերպել եզակի այս մարզախաղերը, որոնք հեզասահ ընթացան, առանց որեւէ պատահարի: Գնահատելի երեւոյթ էր ներկայութիւնը Շրջանային մարզական խորհուրդի ամբողջական կազմին, որ հսկելով ընդհանուր աշխատանքներուն՝ ոյժ եւ կորով ներշնչեց մասնաճիւղին եւ մրցող խումբերուն:

27-րդ անգամն ըլլալով կազմակերպուած այս մարզախաղերուն մասնակցեցան պասքեթպոլի եւ վոլիպոլի Ա.-Գ. դասակարգերու 70 երկսեռ խումբեր՝ Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի, Սան Ֆրանսիսքոյի, Ֆրեզնոյի «Սասուն», Մոնթեպելլոյի, Փաստինայի «Ազատամարտ», Կլենտէյի «Արարատ», Օրէնճ Քաունթիի «Սարդարապատ», Սան Ֆեռնանտո հովիտի «Մասիս», Տայմընտ Պարի «Արագ», Սանթա Գլարայի «Անի», Քրեւենթա հովիտի «Շանթ», Պըրպէնքի «Սիփան», Լաս Վեկասի

«Արցախ» եւ կազմակերպիչ Սան Տիէկոյի «Սելան» մասնաճիւղերէն:

Նոյն օրերուն, շրջանէն ներս գումարուած Հ.Մ.Ը.Մ-ի Հիւսիսային Մ. Նահանգներու երեք շրջաններու միջ-շրջանային հանդիպումը աւարտած ըլլալով, փողովականները՝ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեանի, փոխ ատենապետ եղբ. Փիէր Մանուկեանի եւ ատենադպիր եղբ. Բաֆֆի Յնծալեանի ընկերակցութեամբ, Կիրակի, 19 Փետրուարին այցելեցին «էլիւրնթ Ինթըրնէշնըլ» համալսարանի մարզադաշտը եւ ականատես եղան ընթացող մրցաշարքին: Անոնք նաեւ առանձին հանդիպում մը ունեցան մասնաճիւղի վարչութեան հետ եւ մօտէն ծանօթացան անոր աշխատանքներուն:

«27-րդ տարին ըլլալով, յաջողութեամբ իրագործուեցան «Սելան»ի այս մարզախաղերը, որուն կազմակերպչական աշխատանքներուն մեծապէս օգտակար հանդիսացան Շրջանային մարզական խորհուրդի անդամները: Այս մարզախաղերը առաջին օրէն իսկ խանդավառութեամբ ընկալուած են Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերուն կողմէ, որոնք իրենց յարատեւ մասնակցութեամբ կը խրախուսեն մասնաճիւղը՝ մեծապէս նպաստելով անոր գոյատեւման», գոհունակութեամբ ընդգրծեց «Սելան» մասնաճիւղի հիմնադիրներէն եւ անոր երկար տարիներու ատենապետ եղբ. Բաֆֆի Վարժապետեան:

Յայտնենք, թէ Հ.Մ.Ը.Մ-ի «Սելան» մասնաճիւղը հիմնուած է 14 Փետրուար 1983-ին, խումբ մը հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ-ական քոյր-եղբայրներու կողմէ: Հակառակ Սան Տիէկոյի փոքրաթիւ գաղութին, մասնաճիւղը կարողացած է գոյատեւել եւ պատմական դարձնել յատկապէս պասքեթպոլի եւ վոլիպոլի միջ-մասնաճիւղային այս մարզախաղերը:

Մասնաճիւղը աշխոյժ մասնակցութիւն կը բերէ շրջանի Նաւասարդեան մարզախաղերուն:

2011-2012 տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան կազմին մաս կը կազմէ երիտասարդ խմբակ մը, յանձինս քոյր-եղբայրներ՝ Վատիմ Աղարէկեանի (ատենապետ), Փիթըր Մանուչակեանի (փոխ ատենապետ), Ժանէթ Մանուչակեանի (քարտուղար), Մարինա Թիւֆէնքեանի (գանձապահ), Էդի Արուշանեանի, Ռաքէլ Վարժապետեանի եւ Անդրէ Շամմասի: Մասնաճիւղը կը հաշուէ 106 անդամ, որոնց 86-ը մարզական բաժանմունքի անդամ է, իսկ մնացեալ 30-ը՝ մասնաճիւղի ընդհանուր աշխատանքներով հետաքրքրուողներ:

Մարզախաղերու ախոյեանութեան մրցումները տեղի ունեցան Երկուշաբթի, 20 Փետրուարի ամբողջ օրը: Իւրաքանչիւր աւարտական մրցումէ ետք, մեծ ոգեւորութեամբ յանձնուեցան ախոյեանութեան բաժակները յաղթող խումբին: Մարզական այս աննախընթաց նախաձեռնութիւնը վերջ գտաւ նոյն օրը կէսօրէ ետք ժամը 4-ին:



ՄԱՐԶԱԽԱՂ ԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

ՊԱՏԵԹՊՈՒ

Ա. ԴԱՍԱԿԱՐԳ - ԱՂՋԻԿՆԵՐ (Upper)

1. Կլենտէյլի «Արարատ» (1) մասնաճիւղ
2. Փասատինայի «Ազատամարտ» (1) մասնաճիւղ
3. Կլենտէյլի «Արարատ» (2) եւ Փասատինայի «Ազատամարտ» (2) մասնաճիւղեր

Ա. ԴԱՍԱԿԱՐԳ - ԱՂՋԻԿՆԵՐ (Lower)

1. Սան Ֆեռնանտո հովիտի «Մասիս» մասնաճիւղ
2. Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ
3. Կլենտէյլի «Անի» եւ «Սարգարապատ» մասնաճիւղեր

Գ. ԴԱՍԱԿԱՐԳ - ԱՂՋԻԿՆԵՐ

1. Կլենտէյլի «Արարատ» (1) մասնաճիւղ
2. Քրեսենթա հովիտի «Շանթ» մասնաճիւղ
3. Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ

Ա-1 ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ

1. Կլենտէյլի «Արարատ» (1) մասնաճիւղ
2. Լոս Անճելըսի (1) մասնաճիւղ
3. Կլենտէյլի «Արարատ» (2) եւ «Արարատ» (4) մասնաճիւղ

Ա-2 ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ

1. Սան Ֆեռնանտո հովիտի «Մասիս» (2) մասնաճիւղ
2. Լաս Վեկասի «Արցախ» մասնաճիւղ
3. Կլենտէյլի «Արարատ» (1) եւ «Մասիս» (2) մասնաճիւղեր

Ա-3 ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ

1. Կլենտէյլի «Արարատ» (3) մասնաճիւղ
2. Կլենտէյլի «Արարատ» (2) մասնաճիւղ
3. Սան Ֆրանսիսքոյի եւ «Սիփան» մասնաճիւղեր

Բ. ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ (Upper)

1. Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղ
2. Փասատինայի «Ազատամարտ» (2) մասնաճիւղ
3. Քրեսենթա հովիտի «Շանթ» մասնաճիւղ

Բ. ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ (Lower)

1. Կլենտէյլի «Արարատ» (1) մասնաճիւղ
2. Կլենտէյլի «Արարատ» (2) մասնաճիւղ
3. Քրեսենթա հովիտի «Շանթ» եւ Պըրպէնքի «Սիփան» մասնաճիւղեր

Գ. ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ (Upper)

1. Քրեսենթա հովիտի «Շանթ» մասնաճիւղ
2. Կլենտէյլի «Արարատ» (1) մասնաճիւղ
3. Կլենտէյլի «Արարատ» (2) եւ Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղեր

Գ. ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ (Lower)

1. Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ
2. Կլենտէյլի «Արարատ» (1) մասնաճիւղ
3. Կլենտէյլի «Արարատ» (2) եւ Սան Ֆեռնանտո հովիտի «Մասիս» մասնաճիւղեր

ՎՈՒՊՈՒ

Ա. ԴԱՍԱԿԱՐԳ - ԱՂՋԻԿՆԵՐ

1. Կլենտէյլի «Արարատ» (1) մասնաճիւղ
2. Սան Ֆեռնանտո հովիտի «Մասիս» մասնաճիւղ
3. Կլենտէյլի «Արարատ» (2) եւ Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղեր



ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ ԳԱՒԱՌԻ ՇԵՐԻՖԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶՆԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆ

Մարո Քեչիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Երեքշաբթի, 28 Փետրոս 2012-ի երեկոյան, Լոս Անճելլոս գաւառի Շերիֆի բաժանմունքէն Շերիֆ Լի Պաքայի աւագ խորհրդական չիֆ Կերի Նալպանտեան եւ սերժանթ ձեք Թահանեան, ընկերակցութեամբ Լոս Անճելլոսի համայնքի հետ կապի խորհուրդի անդամ Յարութ Մկրտիչեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի նախկին Շրջանային Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Յովիկ Պետեւեանի, այցելեցին Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոն եւ շահեկան հանդիպում մը ունեցան Շրջանային Վարչութեան հետ:

Ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեան բարի գալուստի խօսքերէ ետք ծանօթացուց Շրջանային Վարչութեան իր գործընկերները եւ ապա, ամփոփ գիծերու Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը ներկայացնելէ ետք, մատնանշեց միութեան հետապնդած նպատակները, որոնք գլխաւորաբար կեդրոնացած են իրեն հոգածութեան յանձնուած պատանի-երիտասարդներուն աւուղջ միջավայր մը ստեղծելու հրամայականին վրայ. կրթական, մարզական եւ սկաուտական ծրագիրներ, որոնց մեծագոյնը Նաւասարդեան մարզախաղերն են:

Հիւրերուն Հ.Մ.Ը.Մ.ը ծանօթացնելու ջանքերը այնքան ալ դժուար չընթացան: Խօսակցութեանց ընթացքին ի յայտ եկաւ, որ Կերի Նալպանտեան Հ.Մ.Ը.Մ.ական հաւատաւոր մարզիկ մը եղած է Լիբանանի մէջ եւ երկար տարիներ անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի «Միամանթօ» ֆութպոլի խումբին, իսկ ձեք Թահանեան Հ.Մ.Ը.Մ.ական ընտանիքի մը փեսան է:



Հիւրերու հետ խմբանկար մը: Չախէն աջ՝ Յովիկ Պետեւեան, Վիգէն Տագեւեան, Ճեք Թահանեան, Րաֆֆի Յնժալեան, Գառնիկ Աբրահամեան, Կերի Նալպանտեան, Յարութ Մկրտիչեան, Փիտր Մանուկեան եւ Թովմաս Տօքսմեճեան:

Արդ, լաւապէս տեղեակ ըլլալով Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներուն եւ գործելաոճին, Կերի Նալպանտեան առաջարկեց միասնական ջանքերով աշխատանք տանիլ երեխաները հեռու պահելու փողոցներէն՝ գանոնք ուսման մղելով, արտադպրոցական ծրագիրներու մէջ ընդգրկելով, դաստիարակելով եւ, վերջապէս, լաւ քաղաքացիներ դառնալու միջոցներ ստեղծելով:

Նկատի ունենալով, որ Հ.Մ.Ը.Մ.ը բազմահազար երիտասարդ-երիտասարդուհիներ կ'ընդգրկէ իր մարզական եւ սկաուտական շարքերուն մէջ, զոյգ ոստիկաններն ալ օգտակար ըլլալու պատրաստակամութիւն յայտնեցին, յատկապէս Նաւասարդեան մարզախաղերու եւ այդ առիթով կազմակերպուած ձեռնարկներու ապահովական միջոցներուն գծով: Անոնք փափաք յայտ-

նեցին նաեւ Նաւասարդեան փառատօնի տարածքէն ներս անկիւն մը ունենալու, որպէսզի երիտասարդութեան դաստիարակութեան օգտակար իրենց ծրագիրները հանրութեան սեփականութիւնը դարձնեն:

Անոնք սիրով ընդառաջեցին Շրջանային Վարչութեան հրաւերին՝ այցելելու Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը, գործնական եւ տեսական դասախօսութիւններով դաստիարակչական ուղղութիւններ տալու յատկապէս ծնողներուն, որպէսզի անոնք եւս իրենց ներդրումը ունենան երիտասարդութիւնը վատ բարքերէ, ապառողջ միջավայրէ եւ մոլութիւններէ հեռու պահելու գործին: Նաեւ համաձայնութիւն գոյացաւ շտապ օգնութեան, ինքնապաշտպանութեան, մարզական եւ այլ օգտակար նիւթերու շուրջ դասախօսութիւններ

ներկայացնելու մարզիչներու եւ ըսկաուտ ղեկավարներուն, խմբապետական կազմերուն եւ յանձնախումբերուն:

Կերի Նալպանտեան քաջալերեց Հ.Մ.Ը.Մ-ի ղեկավարութիւնը օգտակար հանդիսանալու եւ նոյնիսկ ներկայացուցիչներ ունենալու ուսանողութեան եւ համայնքի հետ կապի խորհուրդի աշխատանքներուն մէջ, որպէսզի կարելի ըլլայ լաւապէս դաստիարակել երկրի ապագան նկատուող երիտասարդութիւնը:

Շուրջ երկու ժամ տեւած շահեկան այս հանդիպումը եզրափակուեցաւ Կերի Նալպանտեանի համագործակցութեան կոչով, որպէսզի Հ.Մ.Ը.Մ-ը եւս, իրրեւ երիտասարդական հսկայ կազմակերպութիւն, իր արդար բաժինը բերէ համայնքի անդամներու եւ մանաւանդ ծնողներու դաստիարակչական գիտելիքներու ընդարձակման գործին:

«Մեր տեսլականը եւ հետապնդած նպատակները նոյնն են: Մենք կը հաւատանք, որ եթէ միասնաբար սերտ յարաբերութիւններ ստեղծենք մեր համայնքին հետ, կրնանք օգտակար հանդիսանալ համայնքային էական նկատուող շատ մը հարցերու լուծման: Իսկ այդ գետնի վրայ յաջողելու համար պէտք է հանգիստ զգանք եւ վստահինք իրարու: Ես վստահ եմ, որ եթէ մեր երիտասարդութեան հարցերը լուծելու միասնական աշխատանք տանինք անպայման կը յաջողինք», ինքնավստահութեամբ ընդգծեց Նալպանտեան:

Ան շնորհակալութիւն յայտնեց Յարութ Մկրտիչեանին, այս արդիւնաւէտ հանդիպումին կազմակերպման, իսկ Շրջանային Վարչութեան՝ հանդիպումին ընթացք տալուն եւ համագործակցութիւն ցուցարբերելուն համար:

Ապա, հիւրերը շրջելէ ետք Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնը, իրենց հիացմունքը յայտնեցին անոր ունեցած յարմարութիւններուն համար եւ Հ.Մ.Ը.Մ-ին հետ յանուն մեր երիտասարդութեան գործակցելու խոստումով հեռացան՝ գործնական աշխատանքի մէջ հանդիպելու հեռանկարով:

ՄՏԱՑԱՆՔ

ՀԱՅ ԳԻՐՔԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՁ 1888-2011
Կազմեց՝ Սուրէն Պայրամեան

Տպագրուած՝ Գահիրէի Ազգային Առաջնորդարանի Փօլ Քիլիտճեան հրատարակչական ֆոնտի միջոցներով, «Նուպար» տպագրատուն, Գահիրէ, 2012:




ԽՕՍԷ՛ ԻՆԾԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻԻ ՄԱՍԻՆ Անդրանիկ Վրդ. Կռանեան


«Արծիւեան» մատենաշար, թիւ Ա., Պէյրուս, 2011:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY  **Armavia**
 Արմավիա



				
11, rue des Pyramides 75001 Paris tel 331 42 96 10 10 fax 331 42 96 18 77 saberatours@selectour.com	48, cours de la Liberté 69003 Lyon tel 334 78 60 13 66 fax 334 78 60 92 26 sevan@selectour.com	67, La Canebière 13001 Marseille tel 334 95 09 30 60 fax 334 95 09 30 61 marseille@wasteels.fr	32-38, rue Hanrabedoutian Yerevan tel 374 10 52 55 55 fax 374 10 56 40 30 sabera@armineo.com	



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԾՐՋԱՆԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻԴԱՅԻՆ ԴԻԲԱՆՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Թղթակից
ՈՒԱՇԻՆԿԹԸՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Արևելեան Մ. Նահանգներու շրջանի միջմասնաճիւղային դիւաններու խորհրդաժողովը տեղի ունեցաւ Շաբաթ, 2 Մարտ եւ Կիրակի, 3 Մարտ 2012-ին, հիւրընկալութեամբ Ուաշինկթընի մասնաճիւղի վարչութեան:

Ժողովին ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան, Հ.Մ.Ը.Մ.ի Արևելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան եօթը անդամները, Շրջանային մարզական յանձնախումբի եւ Սկաուտ. Խորհուրդի անդամները, շրջանի տասը մասնաճիւղերու վարչութիւններու դիւաններուն եւ սկաուտական ու մարզական ներկայացուցիչները: Ժողովին հիւրաբար մասնակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեան:



Ժողովին բացումը տեղի ունեցաւ Շաբաթ, 2 Մարտ 2012-ի առաւօտեան ժամը 9-ին, Ուաշինկթընի Սուրբ Խաչ եկեղեցոյ «Արապեան» Հայ Կեդրոնի «Քէչիչեան» սրահին մէջ: Ժողովը վարեց Հ.Մ.Ը.Մ.ի Արևելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յովիկ Աբգարեան:

Ժողովականները նախ լսեցին Հ.Մ.Ը.Մ.ի Արևելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան չորսամսեայ գործունէութեան ամփոփ տեղեկագիրը եւ յաջորդ ամիսներուն համար նախատեսուած ծրագիրները, ապա յաջորդաբար լսեցին մասնաճիւղերու վարչութիւններու չորսամսեայ ամփոփ տեղեկագիրները եւ յաջորդ ամիսներուն համար նախատեսուած ծրագիրները:

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեան ներկայացուց շահեկան զեկոյց մը Արեւմտեան շրջանի գործունէութեան մասին, եւ մանրամասն տեղեկութիւններ տուաւ շրջանի որդեգրած «Data Base»-ի ելեկտրոնային ծրագրին մասին:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան տեղեկութիւններ տուաւ Կեդրոնական



Վարչութեան նախատեսած միջ-ցամաքամասային մարզական խաղերուն մասին:

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի 2012-ի միջ-մասնաճիւղային մարզախաղերը տեղի պիտի ունենան Ուաշինկթընի մէջ, հիւրընկալութեամբ տեղւոյն մասնաճիւղին: Խաղերուն կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ եղբ. Վահէ Թանաշեան ժողովականներուն փոխանցեց խաղերու կազմակերպման մանրամասնութիւնները եւ մասնաճիւղերու վարչութիւններուն յանձնեց խաղերուն թղթածրարը: 2012-ի խաղերը տեղի պիտի ունենան 4-8 Յուլիս 2012-ին, մայրաքաղաք Ուաշինկթընի «Wardman Marriott» պանդոկին եւ «Germantown Soccerplex-Discovery Center» մարզահամալիրին մէջ: Խաղերու ընթացին, Ուրբաթ, 6 Յուլիսին, ելոյթ պիտի ունենան երգիչ Թաթա Սիմոնեան եւ իր նուագախումբը: Շաբաթ, 7 Յուլիսին տեղի պիտի ունենայ աւանդական յաղթանակի պարահանդէսը, ուր ելոյթ պիտի ունենայ Յարութ Պետրոսեան իր նուագախումբով: Փակման արարողութիւնը եւ տողանցքը



տեղի պիտի ունենան Կիրակի, 8 Յուլիսի առաւօտեան:

Կիրակի, 3 Մարտի առաւօտեան, ժողովը շարունակեց իր օրակարգը, աշխատանքային, դաստիարակչական յանձնախումբերու աշխատանքով: Ժողովը փակուեցաւ կէսօրուան ժամը 12-ին:

Խորհրդաժողովին զուգահեռ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի մասնաճիւղերու Սկաուտ. Խորհուրդներու դիւաններու խորհրդաժողովը, ուր արծարծուեցան սկաուտական հարցեր:

Ժողովի աւարտէն ետք, ժողովականներէն մաս մը մասնակցեցաւ Ուաշինկթընի Հ.Յ.Դ. «Սեպուհ» կոմիտէութեան կազմակերպած՝ Հայաստանի Հանրապետութեան բանակի հիմնադրութեան 20-ամեակի տօնակատարութեան, ուր խօսքեր արտասանեցին «Սեպուհ» կոմիտէի ներկայացուցիչը եւ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Թաթուլ Մարգարեան: Օրուան պատգամախօսն էր դեսպանատան զինուորական կցորդ զնդապետ Մեսրոպ Նազարեան:

with the complements of

Restaurant Al-Mayass



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՈՔԻՆԻՈՅ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 85-ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՇՈՒՔ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Թղթակից ԱԹԵՆՔ

Հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ. Յունաստանի Շրջանային Վարչութեան եւ նախագահութեամբ յունահայոց Թեմի Առաջնորդ Խորէն Եպս. Տողրամաճեանի, Շաբաթ, 10 Մարտի երեկոյեան, Գոքինիոյ «Չաւարեան» կեդրոնի «Չաքարեան-Սարաճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գոքինիոյ մասնաճիւղի հիմնադրութեան 85-ամեակի փառաշուք տօնակատարութիւնը:

Բացումը տեղի ունեցաւ Յունաստանի եւ Հայաստանի քայլերգներու յոտնկայս ունկընդրութեամբ: Ապա, բացման խօսքը արտասանեց մասնաճիւղի ատենապետուհի քոյր Ռիթա Յակոբեան: Ան խանդավառութեամբ ողջունեց ներկաները եւ հպարտութեամբ նշեց Գոքինիոյ շրջանէն ներս 1926-ին հիմնուած մասնաճիւղին 85-ամեայ երթը, մեծապէս

զնահատելով անցնող սերունդներու անսակարկ նուիրումի ոգին եւ երիտասարդ սերունդներուն փոխանցուած պատասխանատուութիւն ստանձնելու, հայ երիտասարդները ազգային ոգիով կրթելու ու դաստիարակելու պատրաստակամութիւնը՝ յատկանիշներ, որոնք կը պայծառացնեն Հ.Մ.Ը.Մ.ի ներկան ու ապագան:

Տօնակատարութեան ներկայ եղան Նիքէա-Ռենտիի քաղաքապետ Եորղոս Իոաքիմիտիս եւ յունական մարզական Ֆետերասիոններու ներկայացուցիչներ:

Ներկաներու շարքին էին նաեւ Առաջնորդ սրբազան հայրը, Հայաստանի դեսպան Գագիկ Ղալաչեան եւ դեսպանատան անձնակազմն ու ռազմական կցորդը, հայ աւետարանական համայնքի վերապատուելի Վիգէն Զոլաքեան, հայ կաթողիկէ ժողովրդապետ Ռաֆայէլ Քհնյ. Շէֆիկեան, Գոքինիոյ հոգեւոր հայր Վարազ Ա. Քհնյ. Յովսէփեան, Նէոս Գոգմոսի հոգեւոր հայր Նարեկ Քհնյ. Շահինեան:

Ներկայ էին նաեւ յունահայոց Ազգային Վարչութեան ատենապետն ու անդամները, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչները, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ Լիզա Աւագեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի, Հ. Կ. Խաչի ու Համազգայինի Շրջանային Վարչութիւններու անդամները, «Հայաստան Հիմնադրամ»ի Յունաստանի մասնաճիւղի ատենապետն ու անդամները, Հ.Մ.Ը.Մ.ի Սկաութական Խորհուրդը, Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի պատուոյ նախագահ եղբ. Կարպիս Գույումճեան, «Արարատ» Մարզա-





կան-Մշակութային Միութեան ներկայացուցիչները եւ միութեան գործունէութեան հաւատարիմ քոյր-եղբայրներ եւ հայրենակիցներ:

«ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՈՅԵԱՆՆԵՐԸ»

Օրուան խօսքը յունարէնով փոխանցեց եղբ. Թագևոր Յովակիմեան: Ան «Յառաջ նահատակ» քայլերգին յունարէն թարգմանութիւնը ընթերցելով սկսաւ իր խօսքը, նշելով, որ պատշաճեցումն ու երաժշտաւորումը կատարւած են յոյն ծանօթ լրագրող, գրագէտ Լեֆթերիս Փափատոփուլոսի կողմէ:

Օրուան բանախօսը ընդգծեց Հ.Մ.-Լ.Մ.-ի մասնաճիւղի հիմնադրութեան գաղափարը, որ եկաւ համախմբելու շրջանի երիտասարդութիւնը, հայեցի շունչ ու ոգի փոխանցելով անոնց, սէր՝ հայրենիքի եւ հայութեան նկատմամբ, ծառայութեան եւ նուիրումի ոգի ու պատրաստակամութիւն ջամբելով անոնց: Ան աւելցուց, որ անցնող 85-ամեակին մասնաճիւղը դիմագորակեց տարբեր հանգրուաններ, երկրի պատմութեան գուգընթաց իր երթը շարունակելով: Առաջին տարիներուն, համախմբուածութեան ձրգտող աշխատանքը հետզհետէ փոխակերպուեցաւ, հայապահպանումի եւ ազգային դաստիարակութեան վրայ

կեդրոնացնելով աշխատանքն ու գործունէութիւնը: Շնորհիւ ծրագրեալ դաստիարակութեան, մարզական եւ սկաուտական շարքերը, իրենց ընթացիկ աշխատանքներուն կողքին, սկսան խորապէս գիտակցիլ Հ.Մ.-Լ.Մ.-ի ազգային առաքելութեան եւ Հայ Դատի պահանջատիրական պայքարին: Նոյն շրջանին, մարզական եւ սկաուտական մարզերէն ներս, Գոքինիոյ Հ.Մ.-Լ.Մ.-ի խումբերը կայացած ներկայութիւն դարձան յունական իրականութենէն ներս, մասնակցութիւն բերելով մրցաշարքերու, մարզական եւ սկաուտական նախաձեռնութիւններու:

Այսօր, աւելի քան երբեք, խոր գնահատանքով կ'անդրադառնանք անցնող վարչականներու, Հ.Մ.-Լ.Մ.-ական քոյր-եղբայրներու ծառայութեան կարեւորութեան, նշեց եղբ. Թ. Յովակիմեան եւ աւելցուց, որ խումբերը եթէ նոյնիսկ

բարձրագոյն յաջողութիւններու չհասան մարզական գետնի վրայ, անոնք ախոյեաններ էին բարոյականութեան մարզէն ներս, որովհետեւ արդարութեան եւ պատասխանատուութեան սկզբունքներով կը դաստիարակուէին Հ.Մ.-Լ.Մ.-ի շարքերէն ներս, «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին հաւատարիմ:

Եղբայր բանախօսը յիշատակեց Յունաստանի ազգային խումբին մաս կազմած Հ.Մ.-Լ.Մ.-ի պատմական երեք դէմքեր՝ Դանիէլ Դանիէլեան, Վահագն Աբրահամեան եւ Գրիգոր Աղանեան: Առաջին երկուքը Սելանիկի «Արիս» խումբին որպէս մարզիկներ, իսկ երրորդը՝ Գոքինիոյ Հ.Մ.-Լ.Մ.-ի եւ Օլիմպիաքոսի մէջ: Դանիէլ Դանիէլեան հերոսացաւ Փութպոլի աշխարհէն ներս, երբ 1939-ին, Պուլկարիոյ դէմ Յունաստանի ազգային խումբի մէկ մրցումին, յաջողեցաւ հեռուէն կոլ նշանակել եւ վճռել մրցումին արդիւնքը:

Բանախօսը ներկայի պատկերն ալ ամփոփելով, նշեց թէ մասնաճիւղը կը գործէ 115 հոգինոց սկաուտական խումբով եւ 70 մարզիկներով, Փութպոլի եւ վոլիպոլի խումբերով, մոթորներու ԼԱՄՕԹ-ի մասնակից 24 անդամներով եւ Հ.Մ.-Լ.Մ.-ական 85 անդամներով:

Եղբ. Յովակիմեան շնորհակալութեան խօսք ուղղեց խումբ





բի աշխատանքներուն նիւթապէս սատարող ՄԻՆԵԹԱ ապահովագրական ընկերութեան, Ճրագեան հաստատութեան եւ նուիրատու ու մարզասէր բոլոր հայրենակիցներուն, որոնք քաջալեր կը հանդիսանան աշխատանքին:

«ՀԱՅԱԿԵՐՏՄԱՆ ԻԻՐԱՅԱՏՈՒԿ ԴՊՐՈՅԸ»

Օրուան հայերէն բանախօսութիւնը կատարեց եղբ. Քերովբէ Էփրեան: Ան իր խօսքին սկիզբը նշեց, որ եկէք յետադարձ ակնարկ մը կատարենք 85 տարիներ ետ՝ 1920-ական թուականներու Գոքինիոյ շրջանին վրայ: «Անծայրածիր պարտէզներուն մէջ հազարաւոր վրաններ, թիթեղաշէն մանր կառուցուածքներ ու անոնց մէջ տասնեակ հազարաւոր գաղթականներ՝ հայ եւ յոյն, որոնք արմատախիլ եղած էին իրենց պապենական հողերէն, արեան եւ կրակի ժայթքերէն ազատած, ապաստան գտած էին Յունաստանի անծանօթ այս շրջանին մէջ:

«...Ու այս թշուառ վիճակին մէջ գտնուող հայութիւնը մէկ հոգիով եւ որպէս մէկ բազուկ կը կանգնեցնէ տպաւորիչ շէնք մը՝ «Զաւարեան» վարժարանը եւ ակումբը, որ պիտի ծառայէր որպէս մեր մեսրոպաշունչ գիրի ու հայ ազգային ինքնութեան դարբնոց: Եւ ահա, այս հաստատութեան մէջ իր ծրարակալութեանը կը նետէ միութիւն մը, որուն անուան մոգական չորս մասնիկները՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն կամ իր ծանօթ ըս-

կզբնատառերով Հ.Մ.Ը.Մ. մագնիսական ազդեցութիւն կ'ունենան հայորդիներուն վրայ»:

Շարունակելով, եղբ. Էփրեան ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ը գաղութէն ներս պիտի ներկայանար, ինչպէս ամէնուրեք, որպէս հայակերտման, հայ մարդու ամբողջական տիպարի եւ ազգային արժէքներու իւրայատուկ դպրոց մը: Ու այնուհետեւ, սկառուներ, մարզիկներ, վարչականներ, երկու խօսքով՝ գաղութին պատանի եւ երիտասարդ զանգւածը պիտի համախմբուէր Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ քիչ մը աւելի հայանալու, քիչ մը աւելի հայերէն խօսելու եւ քիչ մը աւելի հաղորդակից դառնալու համար մեր կորսուած պապենական հողին աւանդով»:

Այնուհետեւ, 85-ամեակի հանգրուանին մասին խօսելով, եղբ. Էփրեան յայտնեց. «Դիւրին է խօսիլ անցեալի մասին, փառաբանել եւ գովքը հիւսել մեր միւլթեան արժանավայել ու սքանչելի պատմութեան: Սակայն, ո՞ւր կը գըտնուինք այսօր եւ ի՞նչ է մեր ապագան որպէս գաղութ, կազմակերպուած զանգուած, որպէս կազմակերպութիւններ, միութիւններ ու ազգային հաստատութիւններ:

«Այսօր, աւելի քան երբեք, գաղութը եւ անոր հետ միասին մեր սիրելի Հ.Մ.Ը.Մ.ը հասած են անկիւնադարձային հանգրուանի մը, ուր կենաց մահու պայքարի մարտահրաւէր մը կը դիմագրաւենք: Պատճառը մեր ազգային վարժարաններուն հանդէպ ցցուած

վտանգն է, որ կը սպառնայ փակման ենթարկել հայակերտումի եւ հայապահպանման մեր ամենակարեւոր կռուանը: Յունաստանի տնտեսական ծանր վիճակը եւ անոր պատճառով մեր վարժարաններուն հանդէպ պետութեան նիւթական օժանդակութեան սառեցումը ահաւոր վտանգի տակ դրած է մեր վարժարանները: Ոեւէ մէկը չի կրնար առարկել, թէ հայ դպրոցը այն աղբիւրն է, ուր մեր գաղութը եւ անոր կողքին Հ.Մ.Ը.Մ.ը իրենց ծարաւը յագեցուցած են:

«Հայ Դպրոցի փակման վտանգը միանգամընդմիջտ ուժացման եւ այլասերման պիտի ենթարկէ բովանդակ գաղութը ու անոր կողքին մեր պաշտելի Հ.Մ.Ը.Մ.ը: Անտարբեր մնալ հայ դպրոցի գոյատեւման պայքարին հանդէպ կը նշանակէ ոտնակոխ ընել Հ.Մ.Ը.Մ.ի փառաւոր անցեալը եւ անոր գաղափարական հիմնասիւնը, որ իր իսկ հիմնադիրին՝ Շաւարշ Քրիսեանի բնորոշումով «ապագայ իտէալ հայր կերտելու» վսեմագոյն առաքելութիւնն է»:

Եզրափակելով իր խօսքը, եղբ. Էփրեան նշեց. «Հ.Մ.Ը.Մ.ի Գոքինիոյ մասնաճիւղը մեր բոլորին սրտին ու հոգիին մէջ հայաբոյր այն օճախն է, որ 85 երկար տարիներէ կը վառի ու կը ջերմացունէ մեր ազգային եւ հայրենասիրական ամբողջ էութիւնը»:

ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԵՐԸ

Տօնակատարութեան յայտագրի յուճարէն բաժինը վարեց մասնաճիւղի վարչութեան փոխատենապետ եղբ. Սողոմոն Նուրճանեան: Ան յաջորդաբար ողջոյնի խօսքեր փոխանցելու հրաւիրեց Նիքէա-Ռենտիի քաղաքապետ Երրդոս Իոաքիմիտիսը, Յունաստանի Փոլիսի միութիւններու փոխ նախագահ Աթանասաքին, Փիրէայի Փոլիսի միութիւններու նախագահ Սթելիոս Պրացոլիսը, վոլիպոլիի իրաւարարներու միութեան նախագահը եւ Հ.Մ.Ը.Մ.ի

ԼՄ-ի Շրջանային Վարչութեան կողմէ եղբ. Յակոբ Յովակիմեանը:

Բոլոր խօսք առնողները իրենց յարգանքի ու գնահատանքի գգացումները յայտնեցին Գոքինիոյ շրջանէն ներս ՀՄԼՄ-ի ծառայած գործունէութեան համար, արժեւորելով միութեան 85-ամեայ ծառայութիւնը:

Ողջոյնի խօսքով վերջաւորութեան հանդէս եկաւ նաեւ Առաջնորդ Խորէն Եպս. Տողրամաճեան: Գնահատելով ՀՄԼՄ-ի ծառայանուէր աշխատանքը, Առաջնորդը շնորհաւորեց մասնաճիւղին 85-ամեայ տարեդարձը եւ նորանոր յաջողութիւններ մաղթեց անոր: Ապա, միութեան ներկայացուցած ազգային արժէքին անդրադառնալով, Առաջնորդը յորդորեց անբիծ պահել ազգային մեր արժէքները հետզհետէ դժուարացող պայմաններուն տակ:



Յովակիմեանին, որ ՀՄԼՄ-ի պատմութեան նուիրուած տեսերիզ մը պատրաստեց:

Նշենք, որ սրահի մուտքին, ցուցատախտակներու վրայ գետեղուած էին պատմական լուսանկարներ, ՀՄԼՄ-ի բաժակները եւ ախոյեանութեանց պատուոյ տախտակները, պատրաստութեամբ՝ քոյր Հայկանուշ Մինասեանի եւ եղբ. Սողոմոն Նուրճանեանի:

Տօնակատարութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐ

85-ամեակի ոգեկոչական ձեռնարկներու կազմակերպիչ յանձնախումբը նկատի առած էր վեց երէց եղբայրներու նուիրեալ ծառայութիւնը, որուն համար պարգեւատրեց զանոնք:

Այսպէս, եղբ. Պօղոս Զոլաքեանի հանդիսավարութեամբ, պարգեւատրուեցան Փուլթպոլի մարզիկ եղբ. Բիւզանդ Ունճեան, Փուլթպոլի մարզիկ բժիշկ Յովիկ Տէմիրճեան, Փուլթպոլի մարզիկ եւ Յունաստանի ազգային խումբին մէջ տասնամեակէ մը աւելի մասնակցած (1960-1970 թուականներուն) եղբ. Գրիգոր Աղանեան, վոլիպոլի մարզիկ եւ ՀՄԼՄ-ի վոլիպոլի խումբը յունական Ֆետերասիոնէն ներս ներառելու ջանքերուն սատարած եղբ. Թագւոր Յովակիմեան, գիտակից ու պարտաճանաչ մարզասէր եղբ. Յարութիւն Նուրճանեան եւ ՀՄԼՄ-ի խումբերու աշխատանքներուն մասնակից եղբ. Յակոբ Պէրպէրեան:

Պարգեւատրումները կատարեցին յաջորդաբար Առաջնորդ սրբազան հայրը, Հայաստանի դեսպան Գագիկ Ղալաշեան, Յունաստանի Փուլթպոլի միութիւններու փոխ նախագահ Աթանասաքիս, յունահայոց Ազգային Վարչութեան ատենապետ տոքթ. Արմէն Տէրեան, ՀՄԼՄ-ի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Յակոբ Յովակիմեան եւ ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ Լիզա Աւագեանը:

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՏՈՂԱՆՑՔ

Ձեռնարկներու շարքը ամբողջացաւ Կիրակի առաւօտուն Փուլթպոլի եւ վոլիպոլի մրցումներով, որոնք տեղի ունեցան «Ձաւարեան» կեդրոնի մարզադաշտին մէջ:

Յաջորդեց սկաուտական տողանցք եւ բաժակներու տուչութիւն, կէսօրու ժամը 12.30-ին, մարզասէր հայրենակիցներու ներկայութեան:

Կիրակի, կէսօրին, «Ձաւարեան» կեդրոնի «Ձաքարեան-Սարաճեան» սրահներէն ներս կազմակերպուած խանդավառ խնճոյք-խրախճանքով իրենց աւարտին հասան ոգեկոչական ելոյթները: Խնճոյքին գեղարուեստական բաժինը ստանձնած էր սիրուած երգիչ Կարօ Պարտաքճեանը: Իր ներկայացուցած երգերով, զուարթ մթնոլորտի մէջ պարեցին եւ զուարճացան ՀՄԼՄ-ական քոյրներն ու եղբայրները:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԲՍՏՐԱԼԻՈՅ ՇՐՋԱՆԻ 17-ՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Թղթակից ՄԻՏՆԻ

ՀՄԸՄ-ի Աստրալիոյ շրջանի 17-րդ Շրջանային ներկայացուցչական ժողովը գումարուեցաւ 24 եւ 25 Փետրուար 2012-ին: Ժողովին մասնակցեցան շրջանի 4 մասնաճիւղերէն 21 լիազօր ներկայացուցիչներ, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Քորթեան, Հ.Յ.Դ. «Դրօ» առանձնակի կոմիտէի ներկայացուցիչ եղբ. Արա Պոյաճեան, ի պաշտօնէ եւ խորհրդակցական ձայնով հրաւիրեալներ, նաեւ՝ ընթացաւարտ Շրջանային Վարչութեան անդամներ:

Ժողովականները լսեցին ընթացաւարտ Շրջանային Վարչութեան երկամեայ գործունեութեան նիւթական եւ բարոյական տեղեկագիրները, հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբերու զեկուցումները: Ապա, լուսաբանական հարցումներուն յաջորդեց գործունէութեան ըստ էութեան քննութիւնը: Ժողովականները լրջութեամբ անդրադարձան տեղեկագիրներու ընդմէջէն Շրջանային Վարչութեան կատարած բազմաթիւ աշխատանքներուն՝ համապատասխան գնահատանք կամ քննադատութիւն բանաձեւելով:

Տեղեկագիրներու ընթերցումէն ի յայտ եկաւ, որ ընթացաւարտ Շրջանային Վարչութիւնը 2010-2012 երկամեակին բոլորած է բեղուն շրջան մը, մասնաճիւղերու միջեւ կարողացած է ստեղծել համերաշխ գործակցութիւն: Գումարած է հերթական կանոնաւոր նիստեր, կատարած է բազմաթիւ միջ-վարչական հանդիպումներ, կարեւոր թիւով շրջաբերականներով, նամակներով եւ ե-նամակներով տեւական կապի մէջ մնալով ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան հետ:

Ընթացաւարտ Շրջանային Վարչութիւնը յաջողութեամբ

իրագործած է միջ-մասնաճիւղային 42-րդ, 43-րդ Նաւասարդեան մարզախաղերը (Միտնի, Մելբուռն) եւ սկաուտական 16-րդ ընդհանուր բանակումը, խանդավառ միջնորդութիւնով համախմբելով նորահաս սերունդի բազմահարիւր տղաք:

Շրջանը ՀՄԸՄ-ի 10րդ Պատգամաւորական ժողովին մասնակցած է 3 լիազօր եւ 2 խորհրդակցական ներկայացուցիչներով: Մասնակցած է նաեւ Սփիւռք-Հայաստան 5-րդ խորհրդաժողովին: Համա-ՀՄԸՄ-ական 9-րդ սկաուտական ընդհանուր բանակումին ՀՄԸՄ Աստրալիա մասնակցած է 14 սկաուտով:

Ժողովականները արդար հպարտութեամբ մը տեղեկացան, որ Սփիւռքի նախարարութեան կազմակերպած «Սփիւռքի լաւագոյն երիտասարդական կազմակերպութիւն» մրցանքին շրջանը գրաւած է պատուաբեր 3-րդ դիրքը:

Ժողովին կողմէ ընտրուած բանաձեւի յանձնախումբը լսելէ ետք Շրջանային Վարչութեան տեղեկագիրը եւ այդ գծով եղած թեր ու դէմ արտայայտութիւններն ու կարծիքներու փոխանակումները, հաստատեց, որ ընթացաւարտ Շրջանային Վարչութիւնը կարողութեան սահմաններուն մէջ ըրած է լաւագոյնը, եղած է արդար իր բոլոր որոշումներուն մէջ եւ իր գործունէութիւնը եղած է «խիտ գնահատելի»:

Օրակարգի աւարտին, ժողովը ընտրեց յառաջիկայ երկամեակի նոր Շրջանային Վարչութիւն, որ իր առաջին հանդիպումին, Շրջանային ժողովի գիւանին ներկայութեամբ, գիւանը կազմեց եւ աշխատանքներուն բաժանումը կատարեց հետեւեալ ձեւով: Եղբ. Տիրան Վահրատեան՝ ատենապետ, եղբ. Բաֆֆի Պոչնաքեան՝ ատենադպիր, եղբ. Յովսէփ Շնորհոքեան՝ գանձապահ, եղբ. Ալէն Մկրտիչեան՝ մարզականի պատասխանատու, քոյր Անի Բանոյեան՝ սկաուտականի պատասխանատու:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՍՏՐԱԼԻՈՅ ՄԻԶ-ՄԱՄՆԱԾԻՐԱՅԻՆ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 43-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

ՀՄԸՄԻ Աստրալիոյ միջ-մասնաճիւղային 43-րդ Նաւասարդեան խաղերը տեղի ունեցան Մելբուռնի մէջ, մասնակցութեամբ շրջանի «Անդրանիկ», «Արարատ», «Նաւասարդ» եւ «Արաքս» մասնաճիւղերու մարզական խումբերուն: Խաղերը սկսան «Անդրանիկ» եւ հիւրընկալ «Արաքս» մասնաճիւղի բոլոր տարիքի տղոց ֆուլթայլի խաղով, որուն յաղթեց «Արաքս» մասնաճիւղը եւ շահեցաւ «Թորոս Գահրամանեանի բաժակ»ը: Այնուհետեւ, ներկաները խանդավառուեցան երաժշտութեամբ, երգերով եւ համեղ խորովածներով:

Յաջորդ օր, առաւօտեան, խանդավառ մթնոլորտի մէջ ըսկսան պասքեթպոլի մրցաշարքերը:

ԲԱՑՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Կէսօրին, տեղի ունեցաւ պաշտօնական բացման հանդիսութիւնը՝ բոլոր մասնաճիւղերու մարզական խումբերուն տողանցքով: Ներկայ էին Կիրակոս Աբղ. Դաւթեան, Մելբուռնի Հ.Յ.Դ. կոմիտէին ներկայացուցիչները, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Քորթեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային Վարչութեան անդամներ, մասնաճիւղերու վարչութիւններու անդամներ, յանձնախումբեր եւ հարիւրաւոր հայորդիներ:



Քոյր Սիլվիա Հալլանեան արտասանեց բարի գալուստի խօսք եւ հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տիրան Վահրատեանը, որպէսզի կատարէ մարզախաղերու բացման խօսքը:

Եղբ. Վահրատեան ներկաները ողջունելով յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ. յարգեց իր նուիրական խոստումը՝ կազմակերպելով միջ-մասնաճիւղային Նաւասարդեան 43-րդ մարզախաղերը, այն խաղերը որ 43 տարիէ անխափան տեղի կ'ունենան, հայաբոյր մթնոլորտի մէջ ներգրաւելով բազմահարիւր հայորդիներ, անոնց մէջ զարգացնելով Հ.Մ.Ը.Մ.Ի եղբայրական ըզգացումները, հայկական տոհմիկ ոգին եւ մթնոլորտը:

Շարունակելով, եղբ. Վահրատեան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ.Ի միջ-մասնաճիւղային մարզախաղերուն նպատակն է հայ մարզիկին մէջ զարգացնել եղբայրական զգացումները, մարզական ազնիւ ոգին, համագործակցութիւնը եւ իրարու

արժէքները զնահատելու մօտեցումը: Ապա, ան շեշտեց, որ խաղերուն ընթացքին պիտի ըլլան յաղթողներ եւ պարտուողներ, ինչ որ անխուսափելի երեւոյթ է, սակայն Հ.Մ.Ը.Մ.Ի-ականի ոգին պէտք է ըլլայ տիրապետողը, եւ մենք պարտաւոր ենք մեր կեցուածքով արժեւորել եղբայրական այդ ոգին՝ իրարու ձեռքերը սեղմելով եւ իրարու շնորհաւորելով:

Յաջորդ խօսքը արտա-



սանեց Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Քորթեան: Եղբայրը, իր կարգին, բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի 10-րդ Պատգամաւորական Ժողովին որդեգրուած ռազմավարական ծրագիրին մասին, նշելով որ միութեան յաջորդ 10 տարիները պիտի ըլլան աշխույժ, որովհետեւ մեծ թիւով երիտասարդութիւն պիտի ներգրաւուի Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն մէջ:

Եղբայրը իր խօսքին մէջ արտայայտուեցաւ Սփիւռքի նախարարութեան կազմակերպած լաւագոյն երիտասարդական կազմակերպութեան մրցանքքին մասին, որուն մասնակցե-

ցան 25 սփիւռքահայ կազմակերպութիւններ եւ պատուաբեր բոլոր դիրքերը գրաւեցին Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին անդամները, ինչ որ փաստը կու տայ այն իրողութեան, որ Հ.Մ.Ը.Մ-ի շարքերը կը շարունակեն հաւատարմօրէն գործել հայապահպանման ի նպաստ, «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին ուղիով:

Եղբայր Քորթեանէն ետք հրաւիրուեցաւ Կիրակոս Աբղ-Դաւթեան: Ան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի սկզբունքներուն, գնահատեց ու քաջալերեց մարզիկները եւ Տէրունական աղօթքով փակեց խօսքը:

ՄԱՐԶԱՆԱՂԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Բացման պաշտօնական հանդիսութենէն ետք, Նաւասարդեան մարզախաղերը շարունակուեցան երկու օր եւ վերջ գտան հետեւեալ արդիւնքներով:-

- Հ.Մ.Ը.Մ. «Արաքս» 159 կէտ
- Հ.Մ.Ը.Մ. «Անդրանիկ» 151 կէտ
- Հ.Մ.Ը.Մ. «Նաւասարդ» 82 կէտ
- Հ.Մ.Ը.Մ. «Արարատ» 60 կէտ

Հետեւաբար, Նաւասարդեան 43-րդ մարզախաղերու ընդհանուր խումբերու ախոյեան հանդիսացաւ Մելպուռնի «Արաքս» մասնաճիւղը:

'Made from one single slice of natural Australian opal'



Classique
OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com



«ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԿԱՐԳԻ ՈՒԹԸ ՅՈՒՇԱՄԵՏԱԿԱՆ ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՔՈՅՐ-ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ

Թղթակից ՄՈՆԹՐԷԱԼ

ՀՄԸՄ-ի Գանատայի շրջանի «Արարատեան» կարգի յուշամետալներու տուչութիւնը կատարուեցաւ երկու առիթով, մէկը Մոնթրէալի, իսկ միւսը՝ Թորոնթոյի մէջ:

Ինչպէս ծանօթ է, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը Մարտ 2010-ին որոշեց «Արարատեան» կարգի յուշամետալի տուչութիւն կատարել շրջաններու նախկին ընդհանուր խմբապետ-խմբապետուհիներու, Շրջանային թէ Մեկուսի շրջաններու նախկին խմբապետ-խմբապետուհիներու:

ՀՄԸՄ-ի Գանատայի շրջանը Շրջանային մակարդակի նման պաշտօն չունենալով, Կեդրոնական Վարչութեան գիմեց՝ յատուկ կարգադրութեամբ մը կարգի յուշամետալին արժանացնելու համար վաստակաշատ կարգ մը քոյրեր ու եղբայրներ: Կեդրոնական Վարչութեան պատասխանը չուշացաւ եւ ութ քոյրեր ու եղբայրներ արժանացան համապատասխան յուշամետալին:

Հետեւաբար, Մոնթրէալի «ՀՄԸՄ-Կամք» մասնաճիւղէն յուշամետալին արժանացան քոյր Թալին Սերոբեան, եղբայրներ Արա Իմամէճեան, Թորոս Հալլաճեան (ի բացակայութեան) եւ Բարկէն Կարապետեան:

Մետալներու տուչութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 29 Հոկտեմբեր 2011-ին, մասնաճիւղի տարեկան խրախմբանքին, ձեռամբ՝ ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեանի: Այս առիթով, անոնց յանձնուեցան համապատասխան վկայագիրներ:

Ամիս մը ետք, Գանատայի միջ-մասնաճիւղային 41-րդ մարզախաղերու փակման հանդիսութեան, 27 Նոյեմբեր 2011-ին, Թորոնթոյի մէջ, եղբ. Արմէն Կէտիկեան կատարեց յուշամետալներու եւ

վկայագիրներու յանձնումը Թորոնթոյի մասնաճիւղէն քոյրեր Հելէն Նաճարեանի, Սօսի Թաչճեանի, եղբայրներ Հրաչ Նաճարեանի եւ Ժանօ Սարխանեանի:

Ստորեւ՝ յուշամետալի արժանացողներու միութենական վաստակը ծանօթացրնող ամփոփ տեղեկութիւններ:

ԵՂԲ. ԱՐԱ ԻՄԱՄԷՃԵԱՆ

- Մոնթրէալի «ՀՄԸՄ-Կամք» մասնաճիւղի անդամ 1966-էն ի վեր

- Մասնաճիւղի աւագ խմբապետ՝ 1979-1983

- ՀՄԸՄ-ի խմբապետական համագումարներու մասնակցութիւն՝ 1982-ին, Աթէնք, 1988-ին Լոս Անճելըս

- Համա-ՀՄԸՄ-ական ընդհանուր բանակումի մասնակցութիւն՝ 1978-ին, Յունաստան

- «Մառաշուկեան» շքանշանի արժանացած՝ 1999-ին

- Մաս կազմած է մասնաճիւղի Սկաուտ-Խորհուրդին

- Մասնակցած է 11 Շրջանային ժողովներու

ԵՂԲ. ԲԱԲԿԷՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

- Մոնթրէալի «ՀՄԸՄ-Կամք» մասնաճիւղի անդամ 1963-էն ի վեր

- Մասնաճիւղի աւագ խմբապետ՝ 1984-1990

- Համա-ՀՄԸՄ-ական ընդհանուր բանակումի մասնակցութիւն՝ 1986-ին Լոնտոն, 1990-ին Յունաստան

- Սկաուտական միջազգային ճամպորի մասնակցած՝ 1983-ին, Գանատա

- «Մառաշուկեան» շքանշանի արժանացած՝ 2005-ին



- Շրջանային Վարչութեան անդամ 1999-2003 եւ 2005-2009

- Մասնաճիւղի վարչութեան անդամ 1989-1993

- Մասնակցած է 27 Շրջանային ժողովներու

- Մասնակցած է ՀՄԸՄ-ի 4 Պատգամաւորական ժողովներու (1991, 1999, 2003, 2007)

ԵՂԲ. ԹՈՐՈՍ ՀԱԼԼԱՃԵԱՆ

- Մոնթրէալի «ՀՄԸՄ-Կամք» մասնաճիւղի անդամ 1969-էն ի վեր

- Մասնաճիւղի խմբապետ 1991-2000

- ՀՄԸՄ-ի խմբապետական համագումարի մասնակցած՝ 1996-ին Սիտնի, Աւստրալիա

- Համա-ՀՄԸՄ-ական ընդհանուր բանակումներու մասնակցութիւն՝ 1986-ին Լոնտոն, 1994-ին , 1998-ին եւ 2002-ին Հայաստան

- Մասնաճիւղի վարչական անդամ 2004-2005

- Մասնակցած է 10 Շրջանային ժողովներու

ՔՈՅՐ ԹԱԼԻՆ ՍԵՐՈԲԵԱՆ

- Մոնթրէալի «ՀՄԸՄ-Կամք» մասնաճիւղի անդամ 1976-էն ի վեր

- Մասնաճիւղի խմբապետուհի 1991-1997

- Համա-ՀՄԸՄ-ական ընդհանուր



բանակումներու մասնակցութիւն՝ 1986-ին Լոնտոն, 1990-ին Յունաստան եւ 1994-ին Հայաստան: Մասնակցած է 1997-ի Շրջանային ժողովին

ՔՈՅՐ ՀԵԼԷՆ ՆԱՃԱՐԵԱՆ

- Մոնթրէալի «Հ.Մ.Ը.Մ.-Կամբ» մասնաճիւղի անդամ 1977-ին, ապա՝ Թորոնթոյի մասնաճիւղի անդամ 1985-էն մինչեւ օրս

- Մասնաճիւղի խմբապետուհի 1994-1997

- Հ.Մ.Ը.Մ-ի խմբապետական համագումարի մասնակցութիւն՝ 1996-ին Սիտնի, Աւստրալիա

- Համա-Հ.Մ.Ը.Մ-ական ընդհանուր բանակումներու մասնակցութիւն՝ 1994-ին եւ 1998-ին, Հայաստան

- «Մառաշուկեան» շքանշանի արժանացած 2004-ին

- Մասնաճիւղի վարչական անդամ 2006-2007 եւ 2008-2010

- Մաս կազմած է մասնաճիւղի ըՍ-կառու. Խորհուրդին

- Մասնակցած է 10 Շրջանային ժողովներու

- Մասնակցած է Հ.Մ.Ը.Մ-ի վերջին Պատգամաւորական ժողովին (2011)

ԵՂԲ. ՀՐԱԶ ՆԱՃԱՐԵԱՆ

- Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն միացած է 1973-ին. Թորոնթոյի մասնաճիւղի անդամ է 1979-էն մինչեւ օրս



- Մասնաճիւղի խմբապետ՝ 1987-1993

- Հ.Մ.Ը.Մ-ի խմբապետական համագումարներու մասնակցութիւն՝ 1988-ին, Լոս Անճելըս

- Համա-Հ.Մ.Ը.Մ-ական ընդհանուր բանակումներու մասնակցութիւն՝ 1994-ին եւ 1998-ին, Հայաստան

- «Մառաշուկեան» շքանշանի արժանացած 2004-ին

- Վարչական անդամ 1999-2000, 2002-2005

- Մաս կազմած է մասնաճիւղի ըՍ-կառու. Խորհուրդին

- Մասնակցած է 17 Շրջանային ժողովներու

- Մասնակցած է 1999-ի Պատգամաւորական ժողովին, Լիբանան

ԵՂԲ. ԺԱՆՕ ՍԱԼԽԱՆԵԱՆ

- Հ.Մ.Ը.Մ-ի Թորոնթոյի մասնաճիւղի անդամ է 1970-էն ի վեր

- Մասնաճիւղի խմբապետ՝ 1999-2005

- Համա-Հ.Մ.Ը.Մ-ական ընդհանուր բանակումի մասնակցութիւն՝ 1998-ին, Հայաստան

- Գանատայի սկաուտական կեդրոնէն «Wood Badge»-ի արժանացած 1999-ին

- «Մառաշուկեան» շքանշանի արժանացած 2007-ին

- Վարչական 1990-1991, 1994-1996, 2006-2008

- Մասնակցած է 11

Շրջանային ժողովներու

ՔՈՅՐ ՍՕՍԻ ԹԱՇՃԵԱՆ

- Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն միացած է 1956-ին, Թորոնթոյի մասնաճիւղին՝ 1979-ին

- Մասնաճիւղի խմբապետուհի 1984-1990

- Հ.Մ.Ը.Մ-ի խմբապետական համագումարի մասնակցութիւն՝ 1988-ին, Լոս Անճելըս

- Համա-Հ.Մ.Ը.Մ-ական ընդհանուր բանակումի մասնակցութիւն՝ 1986-ին, Լոնտոն, Անգլիա

- Գանատական «TRILLIUM Badge»-ի արժանացած 1984-ին

- «Մառաշուկեան» շքանշանի արժանացած 1998-ին

- Վարչական անդամ 1990-ին

- Մասնակցած է 8 Շրջանային ժողովներու:

Հ.Մ.Ը.Մ-Ի ՊԵՅՐՈՒԹԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ԵՐԿՕՐԵԱՅ ԶԻՒՆԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ

Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

Շարաթ, 3 եւ Կիրակի, 4 Մարտ 2012-ին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրութի մասնաճիւղի տարեկան երկօրեայ ձիւնագնացութիւնը Աժալթունի մէջ: Հակառակ օդի անսպասու պայմաններուն, սկաուտները եւ ծնողները, թիւով 228, շատ մեծ խանդավառութեամբ մասնակցեցան յիշատակելի այս ձեռնարկին: Ներկայ էին 147 սկաուտներ եւ 81 ծնողներ ու բարեկամներ:

Մասնաճիւղին եօթը խմբաւորումները, ծնողները, բարեկամները շարաթ կէսօրէ ետք ժամը 2-ին մեկնեցան Աժալթունի «Սան Սիթի» պանդոկը, ուր գիշերեցին եւ ունեցան իրենց յատուկ յատագիրը, որ կ'ընդգրկէր խմբային արշաւներ, խաղեր, դասախօսութիւններ, լող եւ այլն:



Յետմիջօրէի ժամը 4-30-ին բոլոր խումբերը ժամանեցին պանդոկ: Մոկլիները (3-6 տարեկան) իրենց ժամանակը անցուցին պանդոկէն ներս խաղալով, լողալով եւ թատրոն պատրաստելով: Գայլիկները (7-11 տարեկան) լողի իրենց յայտագրէն ետք արշաւեցին դէպի մօտակայ անտառը, ուր լսեցին դասախօսութիւն մը: Արծուիկները լողի յայտագրէն ետք կա-

տարեցին զանազան մրցում-խաղեր: Արի-արե-նոյշ խումբերը խմբակային ճոխ յայտագիրնե-րով լեցուցին իրենց ժամանակը: Անոնք արշա-ւեցին դէպի մօտակայ բլուրը, ուր խորովեցին գետնախնձոր եւ շագանակ, իսկ երէց-պարմա-նուհիները ունեցան մարզական երկօրեայ ճոխ յայտագիրներ՝ պանդուկէն ներս եւ ձիւնին վրայ:

Կիրակի առաւօտեան, բոլոր խումբերը մի-ասնաբար մեկնեցան Ֆէյթրուն, ուր իւրաքան-չիւր խումբ ունեցաւ ձիւնի իր յայտագիրը՝ ձիւնեմարդ շինել, վեցեակային մրցակցու-թիւն, սկաուտական ձեռային աշխատանքներ եւ այլն:



Ծնողներն ու բարեկամները դարձեալ իրենց յատուկ յայտագիրով ունեցան խաղեր ու մրցա-շարքեր, ուրախ եւ զուարթ մթնոլորտի մը մէջ: Զեռնարկը, որ աշխուժացուց մասնաձիւղին ներ-քին մթնոլորտը եւ սկաուտ-ծնողք յարաբերու-թիւնները, բոլորին հաճելի ժամանակ պարգեւե-լով հասաւ իր նպատակին:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home,
away from home...*

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am

Reservations



Հ.Մ.Ը.Մ.Ի ՃԻՒՆԻԻ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒՄԾ ԱԿՈՒՄԲԻՆ ԵՒ «ԺԱՆ ԱՊԱՃԵԱՆ» ՍՐԱՀԻՆ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՄԻՈՒԹԵԱՆ «ԱՐՏԱԿԱՐԳ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԷ ԵՂԲ. ԺԱՆ ԱՊԱՃԵԱՆԸ

Թղթակից ՃԻՒՆԻ

Նախագահութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեանի, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Ճիւնիի մասնաճիւղի վարչութեան, Շաբաթ, 21 Յունուար 2012-ի երեկոյեան ժամը 7-ին տեղի ունեցաւ մասնաճիւղի վերանորոգուած աւուրքին եւ «Ժան Ապաճեան» սրահին բացման հանդիսութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին կողմէ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներուն կատարումէն եւ սրահի բացման աւանդական արարողութենէն ետք, հանդիսութեան բացման խօսքը արտասանեց եղբ. Բաֆֆի Կէօվօղլանեան: Ան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի անցեալը պանծալի է եւ սնունդ՝ նորահաս սե-

րունդին համար: Ան աւելցուց, որ Հ.Մ.Ը.Մ.ը կառչած կը մընայ իր սկզբունքներուն եւ առաքելութեան:

Ապա խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Ճիւնիի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Ատուրեան: Ան նշեց, որ մասնաճիւղը իր հիմնադրութեան օրէն ունի սկառտական եւ մարզական բեղուն գործունէութիւն՝ մասնակցելով բազմաթիւ մրցումներու, արժանանալով մրցանակներու եւ բարձր պահելով շրջանին անունը:

Ատուրեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց մասնակցութիւնը բերին սրահի վերանորոգման եւ բացման հանդիսութեան կազմակերպման աշխատանքներուն:

Օրուան երրորդ խօսքը Հ.Յ.Դ. «Հրայր Մարուխեան» կոմիտէին անունով արտասանեց Կարօ Յարութիւնեան: Ան ըսաւ, որ Ժան Ապաճեան իր բոլոր կարելի միջոցներով ծառայած է Հ.Մ.Ը.Մ.ին: Յարութիւնեան բարձր գնահատեց Ճիւնիի աւուրքի բոլոր անդամներուն նուիրեալ գործունէութիւնը: «Նոյն-

իսկ պատերազմի պայմանները պատճառ չդարձան յուսալքումի, այլ՝ անոնք ամուր կամքով շարունակեցին պահպանել աւուրքին երթը», ըսաւ ան:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Յակոբ Քէշիշեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը կը գտնուի իր 100-ամեակի սեմին, եւ այս մէկը ցուցանիչ է, որ միութիւնը կը վայելէ հայութեան սէրը, հաւատքն ու վստահութիւնը: Քէշիշեան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի Ճիւնիի մասնաճիւղի վարչութիւնը միշտ ալ կատարած է իր պարտականութիւնը՝ գիտակցելով շրջանի հայութեան համար Հ.Մ.Ը.Մ.ի եւ աւուրքի դերակատարութեան:

Եղբ. Քէշիշեան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ.ականները հաւատալով «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին, կը շարունակեն անսակարկ եւ անշահախընդիր կերպով կատարել իրենց աշխատանքները:

Եղբայրը իր խօսքէն ետք պարգեւատրեց մասնաճիւղի վարչութեան ան-



Պարգեւատրեալը Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներու հետ:

ՔՈՅՐ ՌԻՄԱ ԱԲԵԴԻ ...

(Շարունակուած Բ. Կողբէն)



ղամներէն եղբայրներ Պօղոս Գսաճիքեանը, Ներսէս Գազանճեանը, Արա Պալեանն ու Ներսէս Ծուպանեանը: Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» շքանշանով պատուեց վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական եւ սրահի վերանորոգման աշխատանքներու բարերար եղբ. Ժան Ապաճեանը:

Խօսք առաւ նաեւ Ճիւնիի քաղաքապետ Անթուան Յրէմ եւ մեծապէս գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի մէջ մեծարելու եւ գնահատելու մօտեցումը: Գնահատելով Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքը՝ ան ըսաւ. «Մենք հոս բոլորս ալ Հ.Մ.Ը.Մ.ական ենք»: Քաղաքապետը յայտնեց, որ հայերը շրջանի բարեկարգման մէջ ունեցած են իրենց յատուկ դերը, ինչ որ հպարտանքի արժանի է:

Այնուհետեւ, իր սրտի խօսքը փոխանցեց Ժան Ապաճեան: Ան յայտնեց, որ այս շքանշանը կը պատկանի Հ.Մ.Ը.Մ.ին ծառայող իւրաքանչիւր անհատի, որ կը հաւատայ միութեան:

Հանդիսութեան վերջին խօսքը արտասանեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեան: Առաջնորդ սրբազանը նկատել տուաւ, որ միութիւնները սերունդներ դաստիարակելու առաքելութիւնը ունին, եւ Հ.Մ.Ը.Մ.ը ամբողջովին կը ծառայէ իր նպատակին:

Գնահատելէ ետք Ճիւնիի մէջ ակումբ ունենալու կարեւորութիւնը, Գեղամ Արք. Խաչերեան հաստատեց, որ Ժան Ապաճեան ակումբին գործունէութեան եւ պահպանման մէջ ունեցած է մեծ դերակատարութիւնը:

գատ մը, այլեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը կորսնցուց անձնագոհ անդամուհի մը, սիրուած ղեկավար մը եւ սկառտական կեանքը քաջալերող միութենական մը:

Անհաւատալի, բայց իրաւ: Քոյր Ռիմա Աբեդի-Սաղրեանը ոչ եւս է: Անսպասելի իրականութիւն մը, որուն ղօժուար է հաշտուիլ:

Քոյր Ռիմա անդամ էր Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղին, ուր երկար տարիներ գործած էր անոր սկառտական բաժանմունքէն ներս, ըլլալով արենոյշ խմբապետուհի, Հ.Մ.Ը.Մ.ի չորրորդ Ճամպորիի մասնակից, մասնաճիւղի խմբապետական կազմի եւ յաճախ՝ սկառտական պատուիրակութիւններու անդամ: Ան առաջին խմբապետուհին եղած էր մասնաճիւղի արենոյշ թիւ 4 խումբին եւ իր խումբին հետ հպարտութեամբ տողանցած էր Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան մարզախաղերու փակման հանդիսութեանց:



2004-ին քոյր Ռիման նշանակուած էր Թեհրանի «Արարատ» կազմակերպութեան 60-ամեակի ոգեկոչման յանձնախումբի անդամ: Երկար տարիներ ընտրուած էր Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղի վարչութեան անդամ եւ գլխաւորաբար ստանձնած էր գանձապահութեան եւ հաշուապահութեան պատասխանատուութիւններ: Ան բազմիցս մասնակցած էր շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն ժողովներուն, ուր յաճախ մաս կազմած էր հաշուեքննիչ յանձնախումբերու:

Քոյր Ռիմա մասնակցած էր 2006-2011 գումարուած Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային ներկայացուցչական ժողովներուն: 2008-ին ընտրուած էր Շրջանային Վարչութեան անդամ եւ ստանձնած էր վարչութեան գանձապահի պաշտօնը, զոր կատարած էր բժախնդրութեամբ ու բարեխղճութեամբ:

2010-ին, ան մասնակցած էր Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած միջ-ղիւանական ժողովին, Փարիզ: Նոյն տարուան Հոկտեմբերին, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան անդամ վերընտրուելով ան դարձեալ ստանձնած էր գանձապահի ծանր պարտականութիւնը:

Բայց աւա՛ղ, քոյր Ռիման չկարողացաւ ամբողջացնել իր ընտրութեան երկրորդ շրջանը: Անողոք մահը չինայեց զինք եւ քոյրը կեանքին հրաժեշտ տուաւ կիսատ ձգելով այնքան կարեւոր իր աշխատանքները:

Ան նուիրեալ միութենական մըն էր եւ մեծ խանդավառութեամբ կը կատարէր իրեն վստահուած պարտականութիւնները, նոյն ոգին փոխանցելով իր շրջապատին:

Ընկերասէր եւ կատակասէր ղեկավար մըն էր:

Քրոջ ոգեւորիչ ժպիտը եւ մանաւանդ խրախուսող աշխատանքները միշտ վառ պիտի մնան զինք ճանչցող Հ.Մ.Ը.Մ.ականներուն մօտ:

Սիրելի՛ քոյր Ռիմա, վաղաժամ եղաւ հրաժեշտդ այս աշխարհէն, սակայն վստահ եղիր, կիսատ ձգած աշխատանքներդ պիտի շարունակուին եւ ամբողջացուին ընտրած ուղիովդ:

Յիշատակդ անթառամ սիրելի քոյր:
Հողը թեթեւ գայ վրադ:



**Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան
ՊԷՅՐՈՒԹ**

Իւրաքանչիւր պետութիւն ունի իր խորհրդանշանները, որոնք սրբօրէն կը պահպանուին եւ կը գործածուին պետական բոլոր հաստատութիւններու մէջ: Պետութեան խորհրդանշաններէն են դրօշը, զինանշանը եւ քայլերգը:

ԴՐՕՇ

Դրօշը իւրաքանչիւր պետութեան պատիւն ու առաջին խորհրդանիշն է: Դրօշին պատմութիւնը կը սկսի մեզմէ 3000 տարի առաջ: Պետութիւններու ղեկավարները շատ հին



ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐ

ժամանակներուն հասկցած են, որ պէտք ունին իրենց պետութեան յատուկ խորհրդանիշի մը, որով տարբերին իրարմէ, ճանչնան զիրար եւ որու շուրջ համախմբուին պետութեան բնակիչները:

Դրօշը կ'օգնէ քեզ ճանչնալու, թէ ո՞ր երկրի ներկայացուցիչին հանդիպած ես: Դրօշին առջեւ կը խոնարհին իբրեւ ամենամեծ սրբութիւն: Ճակատամարտներու ժամանակ զայն կը բարձրացնեն իբրեւ յաղթանակի նշան:

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՕՇԸ

Հայկական դրօշի առաջին գործածութիւնը կապուած է Հայկ Նահապետի անուան հետ: Կ'ըսուի, որ հասնելով Վանայ լիճի ափը, ան պարզած է դրօշ: Դրօշներ ունեցած են նաեւ հայոց թագաւորական տոհմերը: Արտաշէսեան եւ Արշակունի թագաւորական տոհմերու դրօշներուն վրայ պատկերուած են զոյգ արծիւներ, կեդրոնը՝ արեւ: Բագրատունի թագաւորական դրօշին վրայ եւս պատկերուած է արծիւ, իսկ Ռուբինեան թագաւորութեան դրօշին վրայ պատկերուած են արքայական գաւազանով առիւծ եւ խաչ: Դրօշներ ունեցած են նաեւ հայկական նա-

խարարական տուները, իսկ աւելի ուշ՝ կամաւորական գունդերը:

Հայաստանի առաջին հանրապետութեան (1918-1920) դրօշը Եռագոյն էր՝ կարմիր, կապոյտ, նարնջագոյն: Մեր դրօշին գոյները դասաւորուած են վերէն վար. այսպէս՝ կարմիր գոյնը կը խորհրդանշէ հայ ժողովուրդի մշտական պայքարը, կապոյտը կը խորհրդանշէ հայ ժողովուրդի ապրելու կամքը խաղաղ երկնքին տակ, իսկ նարնջագոյնը կը խորհրդանշէ հայ ժողովուրդին աշխատասիրութիւնը:

Խորհրդային կարգերու հաստատումէն ետք (1920), Հայաստանի դրօշը դարձաւ կարմիր, մէջտեղը կապոյտ շերտով: Իսկ 1991 թուականին՝ Հայաստանի անկախացումով վերահաստատուեցաւ առաջին հանրապետութեան դրօշը, այսինքն՝ կարմիր, կապոյտ, նարնջագոյնը:

ՔԱՅԼԵՐԳ

Պետութեան խորհրդանշաններէն մէկն ալ քայլերգն է: Ան փառաբանութեան եւ օրհնութեան երգ է՝ նուիրուած հայրենիքին: Քայլերգը կը կատարուի տօնակատարութիւններու եւ ձեռնարկներու ըսկսելէ առաջ: Հայաստանի Հան-





րապետութեան քայլերգը «Մեր Հայ-րենիքն» է: Անոր բառերուն հեղինակը Միքայէլ Նալպանտեանն է, իսկ երաժշտութիւնը տարբեր ժամանակներու ընթացքին մշակած են Քրիստափոր Կարա-Մուրզան եւ Բարսեղ Կանաչեանը: Ամէն հայ պէտք է գոց գիտնայ իր քայլերգը, իսկ երբ հնչէ՝ անպայման պէտք է ոտքի կանգնի, եթէ գլխարկով է՝ պէտք է հանել գայն: Քայլերգը երգելու ատեն շատերը իրենց ձեռքերը կը դնեն սրտին վրայ՝ ցոյց տալու համար իրենց հաւատքն ու նուիրումը հայրենիքին հանդէպ:



ԶԻՆԱՆՇԱՆ

Պետութեան մը խորհրդանիշներէն կը նկատուի նաեւ գինանշանը: Ան խորհրդանշական պատկերներու համադրութիւն մըն է, որ կ'արտացոլացնէ տուեալ ժողովուրդին աւանդութիւններն ու կարեւորագոյն արժէքները:

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Հին ժամանակներէն սկսեալ, հայկական թագաւորական ու նախարարական տուները ունեցած են գինանշաններ: Պատմութեան տարբեր ժամանակներուն հայկական գինանշանը տարբեր եղած է: Արտաշէսեան եւ Արշակունի թագաւորական տուներու գինանշանը պատկերուած է գոյգ արծիւի տեսքով,

կեղրոնն ալ՝ արեւու նշան: Ռուբինեան թագաւորութեան գինանշանը կը ներկայացնէր թագակիր առիւծը:

1992 թուականին հաստատուեցաւ Հայաստանի Հանրապետութեան պետական գինանշանը, որ իր մէջ կը ներառնէ անցեալի գինանշաններէն դրուագներ: Այսպէս, մեր ներկայ գինանշանին վրայ պատկերուած են՝ կեղրոնը՝ վահանի վրայ, Արարատ լեռը՝ Նոյեան տապանով եւ պատմական Հայաստանի թագաւորական չորս տուներու՝ Արշակունիներու (արծիւ), Արտաշէսեաններու (գոյգ արծիւ), Ռուբինեաններու (առիւծ) եւ Բագրատունիներու (յառաջացող առիւծ) գինանշանները: Վահանը կը պահպանեն արծիւն ու առիւծը, իսկ աւելի վար պատկեր-

ւած են սուր, ճիւղ, հասկերու խուրճ եւ ժապաւէն: Այս գինանշանը որդեգրուած է Հայաստանի առաջին հանրապետութեան շրջանին: Անոր հեղինակն է նկարիչ Յակոբ Կոջոյեան:



ԳԻՏԷԻՐ ԹԷ...

Ճիւղփիւններու դրօշը միակն է, որուն գոյներուն տեղերը պատերազմի ընթացքին կը փոխուին: Բնական գոյները կը վերահաստատուին պատերազմի աւարտէն ետք:



Տարբեր Յայտացրով



Էլի Յուլիշեան

ՍՈՒՏՈՔՈՒ

1			7					2
	7	8				3	1	
	4		1	5			7	
		9		1		7		
7			4		3			1
		1		5		8		
	1		9		6		8	
	2	7				5	6	
6				2				9

Յորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուածով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

Նախորդին լուծումը

4	5	3	9	7	8	6	1	2
1	6	7	4	2	5	8	3	9
2	8	9	1	6	3	5	4	7
9	4	2	8	5	1	7	6	3
8	7	1	6	3	4	9	2	5
5	3	6	2	9	7	4	8	1
7	1	8	5	4	2	3	9	6
6	2	5	3	8	9	1	7	4
3	9	4	7	1	6	2	5	8

Պատասխանը՝ յաջորդիւ


ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Այաքս Ամսթերտամի հայազգի մարզիկը:
- Ծերունի - Գծէ՛, պատկերէ՛:
- Յատկապէս, գլխաւորաբար:
- Ուշ - Ստեղծուածներ:
- Դնդեր - Ճերմակ շինանիւթ:
- Ետին դարձած՝ օտար տղայ - Խորոպճին:
- Ձեռնոց - Ուտելիք - Անլուծելի:
- Պատ - Գրեճական պիտոյքներէն:
- Հրանիւթ - Անտեղեակ - Այբուբենէն:
- Թթիւմոր - Երիվար - Նախանձիլ:
- Սպանացի պարոն - Օրինակէ - Գիւղաքաղաք:
- Անօգուտ - Ձտուած կարագ - Հայկական ամիսներու 8-րդ օրը (հակ.):
- Սրունքի մեծ ոսկորը - Մեծ մայր - Արական օտար անուն:
- Ջրային փոխադրամիջոց - Տէր բայի:
- Գոյութենէ դադրիլ - Առանց աղի:
- Գրաստի «Կօշիկ» - Մանկլաւ - Հաշուեգիրք:
- Կրկնուած բաղաձայններ - Աւետիք Իսահակեանի «Ուստան» - Շարունակ:
- Ոչխար - Յոգնակերտ մասնիկ - Սերտ:
- Յուցական ածական - Էմիլ Զոլայի երկերէն - Ռուսերէն՝ այո՛:
- Յեսանէ՛ - Հեղինակին նկարը՝ գծուած իր իսկ կողմէ:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՅ

- Մանրօջիլ - Անձկութիւն - Ծանրութեան միաւոր:
- Փորթուգալեան նախկին գաղթավայր Հնդկաստանի մէջ - Եգիպտական դից - Անիրաւ:
- «Սաժէս» ակումբի նախկին նախագահը:
- Պնակ - 16 էջնոց հրատարակութիւն - Բոսոր - Ածականակերտ մասնիկ:
- Սաթենիկ թագուհին ցեղը - Համադասական շաղկապ - Անասիման:
- Աստուածային - Ծառի կոճղ - Նաեւ:
- Երէցին - Ափուճ - Պտղատու բոյս:
- Մատղաշ ցուլ - Համանման - Տաղումի հետք:
- Որաներու շեղջ - Աղեղնաւոր - Դէպքի մը պատահման վայր - Քրիստոսէ առաջ:
- Գիշատիչ կենդանի - Իգական օտար անուն - Արաբական երկիր:
- Յամառիլ - Չայնանիլ - Վառ գոյներով պատուական քար:
- Փոքրացնող մասնիկ - Կանացի կոչական բառ - Սպարտակ Մոսկուայի հայազգի մարզիկը:
- Չայնանիլ - Յուցական ածական - Կերակուր - Պանդոյր:
- Առարկայ - Քաղցրաձայն թռչուն - Սահմանային անցք՝ Լիբանանի եւ Սուրիոյ միջեւ:
- Այբուբենէն - Կանացի օտար շաբաթաթերթ - Ոստայնանկի սանտր - Կերպասի լայնք:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1		→													
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															
16															
17															
18															
19															
20															

ԹԻՒ 197 ԽԱՉԲԱՌԻ ԼՈՒՅՈՒՄ

1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															
16															
17															
18															
19															
20															



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Ա. ԿԱՐԳԻ ԴՊՐՈՑ-ԲԱՆԱԿՈՒՄ